Azg
armenian daily
20 ՄԱՅԻՍ 1995. ՇԱԲԱԹ / 93 (847)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Մայիսի 19-ին նշվեց հույն ժողովրդի ցեղասպանության օրը

Մայիսի 19-ին Արտասահմանյան երկրների հեց մշակութային կառի եւ համագործակցության հայկական ընկերությունում Հայաստան-Հունաստան ընկերության նախաձեռնությամբ նշվեց հույն ժողովրդի ցեղասպանության օրը: «1918-22 թթ.-ին թուրք բարբարոսների ձեռքի դարձան հարյուր հազարավոր հույներ», իր խոսքում ասաց դասախոսը, հունագետ դոկտ. Սիմոն Գրիաբարյանը: Նա ներկայացրեց հունաց ցեղասպանության մանրամասներ, անդրադառնալով նաեւ հայոց ցեղասպանությանը: Ըստ Հայաստանում Հունաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յանկովոս Մոլեցիոսի, այդ տարիներին տարանվել է 353 հազար եւ զոհվական է դարձել 2 մլն.-ից ավելի հույն: «Անկախ այս հանգամանքից, հույներն աղաստան են տվել իրենց բախտակից 100 հազար հայ զոհվածներին», նշեց դեսպանը: «Նույն դասմությունը շարունակվում է նաեւ հիմա, որի դարգ օրինակն է Կիպրոսը: Որտեղից որտեղ բերվեցին 70 հազար թուրքեր եւ վերաբնակեցվեցին Կիպրոսում: Որտե՞ղ է սկսվում եւ որտե՞ղ է վերջանում դասմությունը», իր խոսքը եզրափակեց Յ. Մոլեցիոսը: ԵՏ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության հայտարարությունը

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությունը, ելնելով այն իրողությունից, որ ժողովրդավարական ոլեության իրավական հիմքը Սահմանադրությունն է, անցած 5 տարիների ընթացքում ամենագործուն մասնակցությունն է ունեցել հանրաքեությունում ծավալված սահմանադրական գործընթացում: 1993 թ. օգոստոսի 5-ին «Ազգում» հրապարակվել էր ՀՀ Սահմանադրության ՀՈԱԿ տարբերակը: Սահմանադրական ոլորտում ՀՈԱԿ-ի ձեռնարկած հաջորդ քայլը հինգ այլ կուսակցությունների հեց միասին Քաղաքացիական համաձայնության սահմանադրության խորհրդի հիմնադրումն էր եւ «Վեցյակի» համատեղ ջանքերով ՀՀ Սահմանադրության միասնական նախագծի մշակումը: Նշված փաստաթղթերը համաքաստախանում էին սահմանադրական միջազգային տիպոլոգիական, հոչակում մեր համազգային նպատակները, սահմանում հայոց ոլեական ության հիմնադրույթները, իրավական ոլեության եւ օրենքի գերակայության սկզբունքները, ամրագրում մարդու եւ քաղաքացու միջազգայնորեն հանրաճանաչ իրավունքներն ու ազատությունները, իրականացնում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների հստակ տարանջատում եւ ստեղծում այնոիսի ոլեական կառուցակարգեր, որոնք հեստեղծականորեն իրագործելու դեոիում կաոահովվեր երկրի եւ նրա քաղաքացիների անվտանգությունը, տնտեսության ազատականացումը, տնտեսական նախաձեռնությունն ու ազատ մրցակցությունը, որն իր հերթին հնարավորություն կտար լուծելու սոցիալական կենսական խնդիրները:

1994 թ. ամռանը սահմանադրական համալրված հանձնաժողովի կողմից ստեղծված նախագիծը վկայում է, որ հանրաքվեի դրված փաստաթղթում ռամկավար-ազատական սահմանադրական բազմաթիվ սկզբունքներ ու դրույթներ ստացել են համընդհանուր ճանաչում: Այսոեես, միասնական նախագծի 5-րդ հոդվածում ամրագրվել է օրենքի գերակայության սկզբունքը, որը իրավական ոլեության կառուցման հիմնաքարն է: Դրույթ է ամրագրվել է նաեւ այն մասին, որ «Պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնոիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ»:

Բացառիկ կարեւորություն ունի ՀՈԱԿ-ի նախագծից ծնունդ առած բազմակուսակցության սկզբունքի սահմանադրական ամրագրումը «Վեցյակի», այնուհետեւ՝ միասնական նախագծում: Վերջինիս 7-րդ հոդվածում ասված է, որ «Հայաստանի Հանրաքեությունում ճանաչվում է բազմակուսակցությունը: Կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը եւ օրենքներին, իսկ կառուցվածքն ու գործելակերոը՝ ժողովրդավարության սկզբունքներին»: Ռամկավար ազատական գաղափարներին համահունչ է նաեւ 8-րդ հոդվածի դրույթը, համաձայն որի «Պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձեւերի ազատ զարգացումը եւ հավասար իրավական պաշտպանությունը, տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը»:

Ռամկավար-ազատական գաղափարների ազդեցությունն առանձնակի զգացվում է միասնական նախագծի 2-րդ գլխում, որը նվիրված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին եւ շարադրված է ժամանակակից միջազգային իրավունքի պահանջներին, ինչպես նաեւ արդեն իսկ մշակված Ազգային ժողովին ու կառավարությանը նվիրված գլուխներում:

ՀՈԱԿ Հանրաքեական վարչությունը գտնում է, որ նշված առավելությունների կողքին, հանրաքվեի դրված Սահմանադրության նախագիծն ունի նաեւ մի շարք բերություններ եւ նույնիսկ անընդունելի դրույթներ: Դրանք հատկապես վերաբերում են հանրաքեության նախագահից քաղաքացիական, դատական ու դատախազական պաշտոնատար անձանց կախյալ վիճակի (նշանակումների), նրա կողմից Ազգային ժողովը առանց որեւէ հիմքի եւ առանց համաքաստախան հակակշռի լուծարելու եւ տեղական ինքնակառավարումը փաստորեն կենտրոնացված կառավարմամբ փոխարինելու դրույթներին, որոնց կապակցությամբ ՀՈԱԿ-ը «Ազգ» թերթի 1995 թ. մայիսի 12-ի համարում սահմանադրական հանձնաժողովում իր ներկայացուցիչ պրոֆ. Ռաֆիկ Պետրոսյանի միջոցով հայտնել է հատուկ կարծիք: ՀՈԱԿ-ը կոչաշ-պանի իր այդ դիրքորոշումը եւ, ամենայն սկզբունքայնությամբ ու անհաշտությամբ կձգտի հասնել հասարակական պրակտիկայով բացահայտված սահմանադրական բերությունների վերացմանը:

ՀՈԱԿ Հանրաքեական վարչությունը որոշում է դիմել կուսակցության շրջանային վարչություններին եւ ակումբներին՝ քննարկել մամուլում տպագրված հիմնական օրենքի նախագիծը, որպեսզի հավի մը առաջիկա հանրաքվեում Սահմանադրության ընդունման մասին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀՀ նախագահի ճառի անհանգիստ տոնը ներիշխանական տագնապի հայտանշան

Քաղաքական դիտորդների ուշադրությունից չվրիպեց մայիսի 18-ին ՀՀ Գերագույն խորհրդի արտահերթ նիստում հանրաքեության նախագահի արտասանած ճառի անհանգիստ տոնը: Նրանցից մեկի կարծիքով, որը խնդրեց չհրապարակել իր անունը, նախագահը նման չէր իրեն: «Ընդհանրապես, հայտարարեց այդ մեկնաբանը մեր թերթին, նախագահի ելույթներ, անկախ այն բանից համաձա՞յն ենք դրանց բովանդակությանը, թե ոչ, հաստատվում են իրենց ներքին կոզ, տրամաբանությամբ, արտակարգ ինքնավստահությամբ, հեգնանքի եւ անբռնազբոս շարադրությամբ: Մինչդեռ այս անգամ այն կցկտուր էր եւ զգացմունքային: Նախագահն ավելի շատ փորձում էր ներազդել շեշտադրումներով, քան փաստերի ներկայացմամբ, ինչը տեղ-տեղ հասնում էր կարգախոսային կամ դասավճռային որակի»: Նույն մեկնաբանը հիշեցրեց «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի մայիսի 17-ի համարում Սաթենիկ Անանիկյանի ինքնամսցիան ԼՂՀ խորհրդարանական ընտրությունների մասին, որտեղ նույն դատկերով էր ներկայացվել ՀՅ Դաշնակցությունը՝ ինչպես նախագահի ճառում «105 ամյա զառամյալ ծերունի», եւ ավելացրեց. «Երբ այդպիսին է ՀՅԴ-ն, արդյա կարիք կա՞ նրան ներկայացնել որպես զարհուրելի խեշ. «զառամյալը» կենա անկոլնում եւ շուտով ... կմահանա»:

Այնուամենայնիվ, ավելացնենք մեր կողմից. ՀՅԴ-ն առայժմ հեռու է ... մահվան նշաններ ցույց տալուց: Ընդհակառակը, ՀՀ ՆԳՆ մեկնաբանում մայիսի 16-ին մահացած կալանավոր Արտավազդ Մանուկյանի հոգու համար, ինչպես հաղորդում է Լոս Անջելեսում հրատարակվող «Ազդարեզ» օրաթերթ, փաստ, մայիսի 21-ին, Անթիլիասական բոլոր եկեղեցիներն ու արարողությունները:



Վերադառնալով նախագահի ճառի բոլոր տարվորությանը, մենք դիմեցինք նաեւ Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության գրասենյակ, որտեղից, հաստատելով այն տարվորությունը, թե իսկապես ներքին խոր անհանգստություն էր նկատվում հանրաքեության նախագահի ճառում, ասացին, որ «այնուամենայնիվ, թերի կլինեք այդ անհանգստությունը բացատրել միայն մահացած կալանավորի դատապարտյալ: ԱԱՊՎ, ոլես Դավիթ Շահնազարյանի եւ նրա առաջին տեղակալի հրաժարականներն սխալտանեններն են ավելի խոր անհանգստության, որ տիրում է վարչակազմի ներսում: Անձնական նախաձեռնությամբ իրավասությունների խախտումներ վարչապետությունում ծավալուն բնույթ են կրում, դրանք հաճախ զարգացվում են ներքին խմբակցությունների վտանգավոր դրսեորումներով»: «Մանավանդ առաջիկա ընտրություններից հետո, եզրակացրին ՀՌԱԿ գրասենյակից, կառավարության բանալի դիրքերում տեղավորվում են հետտարրական վերջնությունները, հետեւաբար ներկայիս դաշինքի իշխանության ներքին դիրքերի, սահմանադրների եւ ազդեցության ոլորտների ճշգրտման դաշտն է, ինչը, բնականաբար, չի կարող չանհանգստացնել հանրաքեության նախագահին, որին հատկապես հիմա, ընտրությունների նախաշեմին, անհրաժեշտ է ներքին ճակատի կոռ միասնություն»: ■

ՕՍՐԻԱ

Ալեն Ժյուպեն կազմեց Ֆրանսիայի նոր կառավարությունը

Հինգշաբթի հեսՓիջոքերին Ֆրանսիայի նախագահի նստավայրի՝ Ելիսեյան պալատի նոր գլխավոր քարտուղար Դոմինիկ դը Վիլպենը հաղորդել է նոր ընտիր վարչապետ Ալեն Ժյուպեի (նախկին արտգործնախարար) կազմած կառավարության անդամների ցանկը, երեկ տեղեկացրեց Երեւանում Ֆրանսիայի դեսպանությունը: Կառավարության կազմում ընդգրկված են 26 նախարար, 2 պատվիրակ նախարար եւ 14 պետքարտուղար: Կրկին ամբողջապես բաղկացած է երկու գլխավոր աջ ուժերի՝ Հանրապետությանն աջակցող միավորման (ՀԱՄ) եւ Ֆրանսիական ժողովրդավարության միության (ՖԺՄ) ներկայացուցիչներից: Նախարարների մեջ կա միայն մեկ անկուսակցական. դա երբակա միջավայրի նախարար տիկին Կորին Լրոյաժն է: Իսկ կոնկրետ խնդիրներով զբաղվող պետքարտուղարների ցանկում կա 4 անկուսակցական: Մյուս բոլոր անձինք ՀԱՄ-ի եւ ՖԺՄ-ի ներկայացուցիչներ են: Արտգործնախարարի պաշտոնում ՀԱՄ-ի ղեկավար Ալեն Ժյուպեին փոխարինում է Էրվե դը Շարեթը (ՖԺՄ): Պաշտպանության նոր նախարար է դարձել Շառլ Միյոնը (ՖԺՄ), ներքնգործնախարար՝ Ժան-Լուի Դեբրեն (ՀԱՄ): Գոլիստական ՀԱՄ-ի ներկայացուցիչ, մշակույթի նախկին նախարար Ժակ Տուրոնը նշանակվել է արդարադատության նախարար, իր տեղը զիջելով Ֆիլիպ Դուս-Բլազին (ՖԺՄ): Տնտեսության եւ ֆինանսների նախարար է Ալեն Մադելենը (ՖԺՄ), արդյունաբերության նախարար՝ Իվ Գալանը (ՖԺՄ), նախկին մարտիկների եւ պատերազմի զոհերի նախարար՝ Պիեռ Պասքինին (ՀԱՄ), Նոր կառավարության կազմում առկա են սերունդների համերաշխության, ինչպես նաեւ արտաքսյալների ներգրավման նախարարություններ: Երկու պատվիրակ նախարարները ԱԳՆ-ին առընթեր զբաղվում են համագործակցության հարցերով եւ Եվրոպայի գործերով: 14 պետքարտուղարներն զբաղվում են ներքին եւ արտաքին քաղաքականության ամենատարբեր հարցերով: Նրանցից մեկը կառավարության խոսնակն է:

Կառավարության ներկա կազմը ապրիլի 23-ին եւ մայիսի 7-ին երկու փուլով անցկացված նախագահական ընտրության արդյունքն է, որն ավարտվեց աջ ուժերի թեկնածու, Փարիզի արդեն նախկին քաղաքապետ, նեոգոլիստ Ժակ Շիրակի հաղթանակով: Իսկ ընտրություններում անհաջողության մատնված ձախ ուժերը, մասնավորապես սոցիալիստները, ըստ երեւույթին դեռ երկար ժամանակ չեն կարողանա դարձանել իրենց կրած կորուստները:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՄՈՍԿՎԱ. ՀԱԷԿ

Ծգրտվեց առաջին փուլի գրաֆիկը

Օրերս Մոսկվայում տեղի է ունեցել Հայկական ԱԷԿի 2-րդ էներգաբլոկի վերագործարկման հարցերին նվիրված աշխատանքային հերթական խորհրդակցությունը ՀՀ փոխվարչապետ Վիգեն Չիտեչյանի եւ ՌԴ ատոմային էներգիայի նախարարի առաջին տեղակալ Լեւ Ռյաբեւի նախագահությամբ: Խորհրդակցությանը մասնակցել են ՀԱԷԿ-ի վերագործարկման աշխատանքներում ընդգրկված ՌԴ գերատեսչությունների եւ մասնագիտացված կազմակերպությունների, ինչպես նաեւ ՀԱԷԿի ղեկավարները: Լսվել է ՀԱԷԿում աշխատող ՌԴ մասնագետների խմբի հաշվետվությունը աշխատանքների ընթացքի մասին: Ինչպես հաղորդեցին կառավարության մամուլի ծառայությունից, ենթակվել եւ ծգրտվել է ՀԱԷԿի վերագործարկման առաջին փուլի ֆիզիկական բողարկման գրաֆիկը: Ընդհանուր առմամբ հավանության է արժանացել ՀԱԷԿում անվտանգության վիճակի մասին փաստաթուղթը, որը պատրաստել է Հայատոմէներգո վարչությունը:

Քննարկվել են նաեւ աշխատանքների ֆինանսավորման, օդերեւութային անձնակազմի պատրաստման եւ այլ հարցեր:

Աշխատանքային հաջող խորհրդակցությունը կկայանա երեւանում մայիսի 25-28ը:

Կառավարության մամուլի ծառայությունից հայտնեցին, թե Հայաստանի Հանրապետության փոխվարչապետը եղել է նաեւ Վորոնեժում եւ այցելել Նովովորոնեժի ԱԷԿ: Այս ԱԷԿը խոշորագույնն է Ռուսաստանում, այնտեղ գործում են 2500 մեգավատ գումարային հզորությամբ ՎՎԵՌ տեսակի էներգաբլոկներ: Ինչպես հայտնի է, նմանատիպ օբյեկտներ տեղակայված են նաեւ ՀԱԷԿում:

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետը ծանոթացել է Նովովորոնեժի ԱԷԿի աշխատանքին, մասնավորապես՝ կայանի անվտանգության բարելավման միջոցառումներին: Հանդիպումներ է ունեցել կայանի ղեկավարության եւ օդերեւութային անձնակազմի հետ: Փոխվարչապետը ծանոթացել եւ գոհություն է ունեցել օդերեւութային շահագործող անձնակազմի այն ներկայացուցիչների հետ, որոնք մայիսի վերջին ժամանելու են Հայաստան եւ ՀԱԷԿի շահագործման սկզբնական փուլում հատատեղ աշխատելու են հայ մասնագետների հետ:

Վորոնեժի մարզի վարչակազմի ղեկավարի տեղակալ Անատոլի Վելիկանովի հետ տեղի ունեցած բանակցությունների ընթացքում քննարկվել են ինչպես ատոմակայանների, այնպես էլ արդյունաբերական ձեռնարկությունների միջեւ փոխշահավետ համագործակցության, երեւան-Վորոնեժ ավիաչվերթի կազմակերպման եւ այլ հարցեր:

Բանակցություններին մասնակցել է Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության դեսպանորդ-խորհրդական Սուրեն Սահակյանը:

ՀԱՄԴ

Մայիսի 18-ին ՀՀ Գերագույն խորհրդի նիստերի դահլիճում ունեցած ելույթի սկզբում, ինչպես նշել էինք մեր թերթի երեկվա համարում, ՀՀ նախագահը տեղեկանքներ փոխանցեց քարտուղարությանը, որոնք վերաբերում էին Արտավազդ Մանուկյանի անձնական գործին եւ մահվան առիթով կատարված դատաբժշկական վարձաքննությանը: Առաջին տեղեկանքում, որ ստորագրել են ՀՀ դատախազության ՈՒԱՀում օրենքների դահլիճում նկատմամբ հակող բաժնի պետ Ա. Բոնդարյանը եւ նույն բաժնի դատախազ Ս. Ղազարյանը, նշվում է, թե 1954 թ. նոյեմբերի 8-ին Երեւանում ծնված Արտավազդ Պարույրի Մանուկյանը ձերբակալվել է 1994 թ. դեկտեմբերի 3-ին Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաքի ՆԳ վարչության քննչական վարչության 7-րդ բաժնի քննիչ Վ. Նովիկովի կողմից: 30.12.94 թ. Մոսկվա քաղաքի ժամանակավոր դատական մեկուսարանից տեղափոխվել է Մոսկվայի թիվ 2 քննչական մեկուսարան, այնտեղից 28.02.95 թ. էսկորտավորվել է ՀՀ ԱԱԾՎ քննչական մեկուսարան, իսկ 02.03.95 թ. այդտեղից տեղափոխվել է Երեւանի թիվ 1 քննչական մեկուսարան: ՀՀ ԱԱԾՎ քննչական մեկուսարանի բժիշկ Պ. Ժույկովի կողմից 2.03.95 թ. բժշկական տեղեկանք է կազմվել այն մասին, որ Ա. Մանուկյանը երկար ժամանակ տառապում է արնահոսող թոքախտով եւ նրա առողջական վիճակը դահանջում է հիշյալ հիվանդության անհետաձգելի բուժում ստացիոնար դայմաններում, որը բացարձակապես հնարավոր չէ ԱԱԾՎ-ի քննչական մեկուսարանում: Այդ կապակցությամբ համադատական մարմինների ՀՀ գլխավոր դատախազությունից հետո, այն է Ա. Մանուկյանին տեղափոխել ՔԳԻՎ կենտրոնական հիվանդանոց, 02.03.95 թ. Ա. Մանուկյանին ԱԱԾՎ մեկուսարանից տեղափոխել են ոչ թե հիվանդանոց, այլ Երեւանի թիվ 1 քննչական մեկուսարանի բուժմաս, որ եւ նախաձեռնել են նրա բուժումը: Եվ միայն 1995 թ. մայիսի 5-ին Մանուկյանի առողջական վիճակի վատթարացման դատճառով վերջինս տեղափոխվել է ՀՀ ՆԳՆ ՔԳԻՎ կենտրոնական հիվանդանոց, որ եւ 16.05.95 թ. ժամը 1 անց 30 րոպեին մահացել է: Նախնական ախտորոշումը եղել է գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարում ի հիմիկ ինսուլտի ձեւով, աջակողմյան հեմիդարեզով սուր արտանթային անբավարարություն: Արտաքին եւ ներքին արյունահոսող թոքախտ: Խրոնիկական անեմիա արյունահոսությունից հետո: Նույն օրը 1995 թ. մայիսի 17-ին ՀՀ գլխավոր դատախազ Արտավազդ Գեւորգյանը որոշում է կայացրել Ա. Մանուկյանի դատաբժշկական կրկնակի փորձաքննություն նշանակել, որի կատարումը հանձնարարել է ՀՀ առողջապահության նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովին: Այդ հանձնաժողովը, որի կազմում են ընդել 5 դրոֆեսոր, մեկ վարչության դետ եւ մեկ բժշկական գիտությունների թեկնածու, կատարելով Արտավազդ Մանուկյանի դիակի դատաբժշկական կրկնակի փորձաքննություն, դարզել է, որ մահը վրա է հասել արտամկանի սուր ինֆարկտից արտահայտված երկկողմանի տարածուն թոքաբորբից:

Հայտնաբերվել է նաեւ հեմոռագիկ անեմիա, ուղեղի խիստ արտահայտված այտուց: Ինչպես դիակի առաջացիին, այնպես էլ կրկնակի դատաբժշկական փորձաքննության ժամանակ մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ, ինչպես նաեւ ոսկրահոդային համակարգի կողմից տրամադրելի բնույթի վնասվածքներ չեն հայտնաբերվել:

Մի այլ գրությամբ, առողջադահության նախարար Առա Բաբլոյանը ՀՀ գլխավոր դատախազ, ՀՀ արդարադատության դետական խորհրդական Արտավազդ Գեւորգյանին հայտնել է, թե վերոհիշյալ հանձնաժողովը դատասխանատվության է ենթարկվել եւ աշխատել Միջազգային կարմիր խաչի կոմիտեի Հայաստանի գրասենյակի ղեկավար Իվոնի Բոսին:

Բերված փաստաթղթերից, հատկապես առաջինից, դարզ երեւում է, որ եթե ԱԱԾՎ քննչական մեկուսարանի բժիշկ Ժույկովի տված ցուցմունքի համաձայն Արտավազդ Մանուկյանը ՀՀ ՆԳՆ ՔԳԻՎ հիվանդանոց տեղափոխվեր ոչ թե մայիսի 5-ին, այլ մարտի 2-ին, հնարավոր է, որ նրա առողջական վիճակը բարելավելու դատեհությունը չկորցվեր:

ԱՆԳՐԱԴԱՐՁ

Ինչի՞ց է մահացել Արտավազդ Մանուկյանը

ՕՐՎԱ ՀԵԿՔՈՎ

Միջազգային կազմակերդությունը ՀՀ նախագահին՝ «Գոլոսի» հարցով

Մայիսի 16-ին «Ռեդորտյորներ առանց սահմանի» կազմակերդության (Փարիզ) քարտուղարությունը բաց նամակ է հասցեագրել Հայաստանի Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Նամակում, մասնավորապես, ասվում է. «Դարո՞ն Նախագահ: Աշխարհում ազատ մամուլի դաշտպանության «Ռեդորտյորներ առանց սահմանի» անկախ կազմակերդությունը մտահոգված է այն դժվարություններով, որոնց բախվում է ռուսալեզու «Գոլոս Արմենիի» ընդդիմադիր թերթը»: Այնուհետեւ անդրադառնալով «Գոլոս Արմենիի» թերթի եւ «Պարբերական» հրատարակչության միջեւ ամիսներ տեւած գժտությանը, միջազգային կազմակերդությունը բողոքում է դետական տդարանի կիրառած մերոդի դեմ, որը հանգեցրեց երեւանում դեռեւս լույս տեսնող ընդդիմադիր հիմնական թերթերից մեկի հրատարակման դադարեցմանը: «Այս իրադարձությունը, ասված է նամակում, տեղի է ունեցել խորհրդարանական ընտրություններից ընդամենը երկու ամիս առաջ եւ հաջորդել է զանգվածային լրատվության 14 անուն միջոցների փակմանը, որոնք ուղղակի կամ անուղղակի կերդով կաղված են եղել Դաշնակցություն կուսակցությանը, որի գործունեությունն, իր հերթին, կասեցվել է 1994թ. դեկտեմբերի 28-ից: Այս իրավիճակը կարող է միայն անհանգստություն դատճառել մեր կազմակերդությանը: Այն խնդրում է օգտագործել Ձեր ողջ ազդեցությունը, որդեսզի առավել կարճ ժամկետում «Գոլոս Արմենիի»-ն կարողանա հրատարակվել եւ որդեսզի փոխադարձ համաձայնությամբ լուծվի թերթի եւ «Պարբերականի» միջեւ ծագած վեճը: Ձեր դատասխանն ակնկալելով, դարո՞ն Նախագահ, խնդրում ենք ընդունել մեր խորին հարգանաց հավաստիքը»:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

Սկսված են Գյումուրի ՀԷԿ-ի վերագործարկման աշխատանքները

Գյումուրի ՀԷԿ-ի վերագործարկման ուղղությամբ տարվող աշխատանքներն ընթանում են նույն արագությամբ: Այս մասին տեղեկացրեց ՀՀ էներգետիկայի եւ վառելիքի նախարարության լրատվական ծառայության ղեկավար Ժաննա Դեւոնդյանը: Նա ավելացրեց, որ արդեն մարվել է մեկ գեներատոր, շուտով խնային աղարներից ամբողջովին կազատվի տուրբինային արտադրամասը, միաժամանակ կիջեցվի նաեւ հոսդան գետի մակարդակը: Այժմ ստուգվում է ագրեգատների վիճակը: Սկսված են ՀԷԿ-ի վերականգնման նախագծային աշխատանքները:

Գ. Մ.

Վահան Փափազյանի եւ Դավիթ Վարդանյանի դատական վեճը դեռ չի ավարտվել

Ինդդես ավելի վաղ հաղորդել ենք զանգվածային լրատվության միջոցները, 1994թ. հունվարի 18-ին Երեւանի Մաշտոցի շրջանի ժողդատարանը ընդունել է Հայաստանի խորհրդարանի նախագահության անդամ, Ազգային ժողովրդավարական միության խորհրդարանական խմբակցության անդամ Դավիթ Վարդանյանի դեմ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանի ներկայացրած հայցադիմումը (հայցադիմումում նշված է, որ «Հայք» թերթի 1993թ. ապրիլի 9-ի համարում հրատարակած իր «Հայկական տարբերակ-2» հարցազրույցում դատասխանողը հայտարարել է, որ Վ. Փափազյանը հայիոյել է հայկական սփյուռքի երկու ազդեցիկ կուսակցություններին): Ժողդատարանը բավարարել է հրատարակավ ներողություն խնդրելու հայցվորի դահանջը: Սակայն ՀՀ Գերագույն դատարանի քաղաքացիական հարցերով 1994թ. մարտի 31-ի կոլեգիան վերանայել է այդ որոշումը եւ գործը ուղարկել ստորին ատյաններ՝ կրկնակի քննության համար: ԱԺՄ վարչության անդամ Վոլոդյա Հախվերդյանը Նոյյան տաղան գործակալությանը բդրակցին հաղորդել է, որ Մաշտոցի շրջանային ժողդատարանում գործի նոր լսումը հետաձգվում է հայցվորի (Վ. Փափազյան) խնդրանքով՝ աշխատանքով խիստ ծանրաբեռնված լինելու դատճառով:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի երկաթուղայինները շոշափում են եվրոդական երկրների փորձը

ՏԱՍԻՍ-ի շրջանակներում եվրոդական գործընկերների հետ երկաթուղայինների համագործակցությունը նոր դրակ է ստանում: Ապրիլի 3-ից մայիսի 17-ը Ֆրանսիա, Իտալիա, Հունաստան մեկնած երկաթուղային ինժեներների եւ տնտեսագետների 2 խմբերը վերադարձան Երեւան: Երկաթգծի վարչության դետի տեղակալ, ինժեներական խմբի ղեկավար Լեւոն Հակոբյանը հայտնեց, որ հանրապետության երկաթուղային մասնագետները արտասահմանյան գործընկերների մոտ եղան նրանց փորձը ուսումնասիրելու, տեխնիկական նոր միջոցներին ծանոթանալու նպատակով:

«Եվրոդայում երկաթուղին մնում է հիմնական բեռնատար եւ ուղեւորատար փոխադրամիջոցը, ասաց դրն. Հակոբյանը, օրինակ, Ֆրանսիայում արագընթաց երկաթուղին իր վրա է վերցրել ուղեւորների փոխադրման ադյուծի բաժինը 75-80 տոկոս: Մեր մասնագետները իրենց ներուժով չեն զիջում եվրոդացի իրենց գործընկերներին, ինչ չես կարող ասել տեխնիկական հնարավորությունների եւ տեխնոլոգիաների մասին: Հակադես ուսանելի շատ բան կա յոկոմոտիվային եւ գծային ծառայությունների բնագավառում»:

Վարչության դետի տեղակալը հայտնեց, որ հունիսի 1-ին Երեւան կժամանի ծրագրի ղեկավարներից դրն. Վասիլիոը: Նա տեղում կծանոթանա հանրապետության երկաթուղու զարգացման հնարավորություններին եւ կվճռի ֆինանսական օգնության հարցերը: Եվրոդական երկրներին ձեռնտու է, որ Հայաստանի երկաթուղին ոտքի կանգնի, քանի որ այս տարածքը շատ հարմար է տարանցիկ ուղիների համար: Պետք է կիրառել եվրոդացիների ինժեներական կառույցների, երկաթուղային կայանների տարածքներն ու հնարավորությունները արդյունավետ օգտագործելու, համակարգչային ծառայությունից առավելագույնս օգտվելու փորձը:

Ցու. Ս.

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Երքաղխորհուրդ. Նորից դասագրքերի մասին

Երեկ Երեւանի քաղաքային խորհրդի դահլիճում Երքաղխորհրդի նախագահի առաջին տեղակալ Յուրի Բախչյանը խորհրդակցություն էր հրավիրել, որը, ինչպես նախորդ օրը Գխ կրթության հանձնաժողովի հրավիրած խորհրդակցությունը, նվիրված էր նոր հրատարակված դասագրքերի բաժանորդագրության խնդրին: Հենց սկզբից դարզ դարձավ, որ անհնար է ընել սոսկ այդ խնդիրը, առանց դասագրքերի բովանդակային ենթակայման անելու: Հրավիրված գիտնականները, ժողկրթաժվարները, ուսուցիչները փորձեցին դարզել, թե ինչպես է, որ մինչեւ այս գրքերի լույսընծայումը առաջարկվող մյուս գրքերը տդագրվելու համար անցնում էին չափազանց խիստ փորձաքննություն գումարած ամիսներ տեւող նոմենկլատուրային քաշքշուկը, իսկ այս հեղինակներին հաջողվեց հրաբով խուսափել դրանից:

Ինչպես նկատեց քաղխորհրդի նախագահ Վահագն Խաչատրյանը, հայոց լեզվի դատմության մասնագետ, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի նախկին դեկան, դոկտոր, դրոֆեսոր Հովհաննես Բարսեղյանի մասնագիտական գիտելիքները թույլ են տալիս բացասական, ախտաբական տալ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի «Շաղիկ» հրատարակչությունում տդագրված դասագրքերին, սակայն լուսավորության փոխնախարար Ռոբերտ Փոլադյանը իր ելույթում ասաց, որ իրեն մինչեւ վերջ դետք է շարունակեն սկսած գործը:

Մեր այն հարցին, թե այլընտրանքային դասագրքերի գոյությունը ողջունող նախարարությունը ինչո՞ւ նոր դասագրքերի հետ մեկտեղ չի առաջարկում հին դասագրքերը, այդդես էլ ըստ էության դատասխան չտրվեց, մուրբողնելով այն հարցը, թե լուսավորության նախարարության համար ինչ է նշանակում այլընտրանք: Մի այլ հարցից հետո դարզ դարձավ, որ լուսավորության նախարարությունը դատրաստվում է բաժանորդագրությունից հետո մնացած գրքերը հանել առաջ շուկա: Սենք հարցրինք, որ փոխնախարար դրն. Սահակյանը հայտարարել էր, թե այդ գրքերը տրամադրվելու են անաղահով ընտանիքների երեխաներին (ինչպես նախարարությունն է տդատում, գումար հովանավորները կտրամադրեն, իսկ քաղխորհրդի կրթության հանձնաժողովի նախագահ դրն. Գաբրիելյանն ասաց, որ մայիսի 10-ին որոշում են ընդունել 50 մլն դրամ հատկացնել այդ խնդրին, սակայն դա կլուծի միայն աշակերտների 15-20 տոկոսի հարցը), հարց ինչո՞ւ են շուկա դուրս գալու, փոխնախարար դրն. Փոլադյանը դատասխանեց, որ շուկա դուրս կբերվի հավելյալ խմբաքանակ: Նախ, անհավատալի է, որ դահանջարկից ավելի բդարկված դասագիրքը շուկա կգտնի: Երկրորդ, միգուցե այս հայտարարությունը ժողովրդի «աչքը վախեցնելու» եւ բաժանորդագրությունն արագացնելու միջոց է: Երրորդ, խորհրդակցությանը հրավիրվածները մտահոգ էին այն խնդրով, որ ուսումնական տարեսկիզբը էլի առանց դասագրքերի են սկսելու, եւ ընդհանրապես կա՞ն երաշխիքներ, որ դրանք կստացվեն: Բաժանորդագրությունը կազմակերդող լուսավորության նախարարության «Ուսում» ծառայության արտադրական վարչության դետ դրն. Մարկոսյանը իր վրա վերցրեց դատասխանատվությունը:

Դրն. Վահագն Խաչատրյանը հայտնեց, որ հաջորդ շաբաթ նորից կհրավիրվի խորհրդակցություն, որ դատագրքերն ընդունող նախարարության ուսումնագիտական խորհրդի հետ կկնարկվի դասագրքերի բովանդակության հարցը:

Ա. Գ.

ՌԱՍԿՈՒՐԱՅԻՆ ԱԶԳԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տաքի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թող 562941, AT&T (7 8852) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԼԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍՍՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE հանձնարարական
ծառայություն / 581841
Ոճը եւ տարածքները ՊԱՌԼ ՊԱԼԱՍԵԱՆԻ
Apple Macintosh
հանձնարարական տարածքը
«Ազգ» թերթի
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՍԵՄԻՆԱՐ

Անտառը պահանջում է մարդկային հոգածություն

Այս շաբաթ իր աշխատանքներն ավարտեց «Հայաստանի անտառային սեկտորի զարգացում» միջազգային սեմինարը, որը կազմակերպել էին ՄԱԿ-ի «Պարեն և գյուղատնտեսություն» կազմակերպությունը (FAO) և «Հայանտառ» ԱՄՄ-ը

սամբ եւ հանգստի գոտի (ձմեռային անտառի էկզոտիկան վաղուց շատերին չի հրաղարում): Փայտամշակման արդյունաբերությունը գրեթե կանգ է առել, աշխատում է իր հզորության 5-10 տոկոսի չափով: Արդյունաբերության մյուս հումքատեսակների նման մինչև վերջին տարիներս անտառանյութը դրսից էր բերվում: Մինչև 88 թվին Հայաստան էր ներկրվում տարեկան մոտ մեկ միլիոն խմ բնափայտ եւ անտառտնտեսության դերը ամբողջ հանրապետության համախառն արտադրանքի զուտ եկամտի 1 տոկոսն էր կազմում: Այդ դեղքում բնական էր իշխանությունների ոչ "շահագրգիռ վերաբերմունքը: Սակայն հիմա, երբ զանգվածաբար հոգի է փչվում ֆինանսական եւ փոխադրամիջոցների դժվարությունների հետ, առաջնային է դառնում ներքին ոլորտների վերազինահատումը: Այդ կապակցությամբ «Հայանտառ» վարչությունը միջազգային փորձագետների հետ ստեղծում է նոր անտառային քաղաքականություն, որը անտառային ռազմավարության դրույթների հետ մնկտեղ քննարկվեց եւ ընդունվեց սեմինարում, ապա ներկայացվեց կառավարության հաստատմանը: Լեռնային դպրամասերում անտառի բնապահպանական դերը շատ կարեւոր է: Բայց չի մոռացվում նաեւ տնտեսական դերը: Խորհրդային շրջանում անտառները ինչպես հարկն է չեն օգտագործվել: Այժմ հանրապետությունն ունի մոտ 40 մլն խմ ոլորտ, որը պիտի գույքագրվի եւ տեսակավորվի: Շատ գերսատհուն ծառեր կան, որ ժամանակին կարող էին արժեքավոր բնափայտ լինել, իսկ հիմա միայն վառելանյութ են:

Իհարկե, անտառտնտեսության դեպքում կոմիտեն, որ ստեղծվել էր 1966-ից, այդ բոլոր խնդիրները դրել էր իր առջեւ, բայց այժմ, ֆինանսական նոր հարաբերությունների ժամանակ, դրանք դեռեւ է համակարգել եւ ձեռնամուխ լինել դրանց լուծ հնարավորության եւ առաջին անհրաժեշտության լուծմանը:

93 թ. Հայաստանը անդամագրվեց FAO-ին: Կազմակերպությունում մեծ ծրագրեր կան մշակված զարգացող երկրներին (ինչպիսին Հայաստանն է) օգնելու, աջակցելու համար: Գյուղատնտեսության հետ կապված բոլոր տեսակի խնդիրներ. այդ թվում եւ վարկեր. իրականացվում են FAO-ի միջոցով: Անդամագրվելու համար Հայաստանի ներկայացրած ծրագրին տրամադրված վարկը անհասույց էր. մեկ տարով. սահմանափակ (մինչեւ 400 հազար դոլար) գումարով: Գումարի կեսից ավելին հատկացվեց խորհրդատուների գործուղման եւ տեղում ուսուցման ծախսերին, իսկ 45-50 տոկոսը տրամադրվեց «Հայանտառ» միավորման հզորացմանը ավելացնելուն:

Սեմինարի անցկացումը նոպաստեց միջազգային կազմակերպությունների Հայաստանում ունեցած ծրագրերի նկատմամբ վստահության ավելացմանը. որը միջազգային բանկերի հետ համագործակցելու երաշխիք կլառնա:

Համագործակցության ծրագրի առաջին օգնությունը կապված էր վառելափայտի ճգնաժամի մեղմացման հետ: Արդեն անցած տարի Նոյեմբերյանում եւ Իջեւանում փորձ արվեց իրականացնել փայտանյութի վաճառքի աճուրդային եղանակը: Այս եղանակով կազմակերպություններին եւ անհատներին վաճառվեց փայտանյութ. որի նախատեսված եւ վաճառքի գները տեղայականից զգալիորեն ցածր էին: Ընտրվեց հատվող փայտանյութը. որակավորվեցին մասնագետները. հատակագծվեցին տեղափոխման ուղիները եւ վաճառքի կետերը. կազմակերպվեց նախնական զրավագրանքի գանձումը: Նախկինում հոդի էրոզիայի դեմ պայքարելու նպատակով Հայաստանում ամեն տարի 6-7 հազար հեկտար անտառների ցանք էր իրականացվում գյուղատնտեսական արտադրության համար ոչ պիտանի հողերում լեռնալանջերին, ավազուտներում: Այդպես հիմնադրվել է շուրջ 60 հազար հեկտար արհեստական անտառ: Ողողումներից խուսափելու համար միտս արգելվել են համատարած հատումները: Սակայն այս տարի վառելիքային ճգնաժամի պարտադրմամբ «Հայանտառ» բնակչությանը վառելափայտ տրամադրելու համար հատման տարածքները 60 հազար խմ-ից հասցրեց 300 հազարի, օգտագործելով առավելագույն հնարավորությունները:

Պետք է ասել, որ անտառահատված շատ տարածքներում հողը օգտագործվում է բանջարեղեն աճեցնելու նպատակով: Հաճախ այն վարձակալության է տրվում 3-4 տարով: Չնայած այդ տեղերում արգելվում է ոչտպատ ծառեր տնկել հետագայում անտառը վերականգնելու եւ հանգստի գոտի հիմնելու համար (անտառային զանգվածի մեկ հեկտարը օդում մաքրում է 300-400 տոնա փոշուց. իսկ ոչտպատ ծառերն այդ անում են 20 անգամ դանակս). գաղտնիք չէ, որ շատերին հաջողվում է այդ հողերը սեփականացնել: Մանավանդ անդառնալի են աղտոտիչի շինարարությունները:

Սեմինարի ընթացքում քննարկվեց անտառային հատվածների սեփականաշնորհման կամ վարձակալության հարցը, որը պետք է հատակեցվի մինչեւ ամանակի խնդիրներին համաչափ: «Հայանտառ» ԱՄՄ տնօրեն դրեն. Թամազյանը նկատեց, որ անհրաժեշտ է դպահանջվելու անտառների գույքագրման համար, քանի որ նախկին գրանցումները 20-30 տոկոսի շեղումներ ունեն: Նա նշեց նաեւ, որ հիմնականում բոլոր հարցերի շուրջ մշակված են ծրագրեր, կա նյութական բազա, որը բարելավելի եզրից մի քիչ էլ ցածր է. բայց վարկերի օգնությամբ կարելի է անմիջապես սկսել անտառպահպանության եւ անտառային արդյունաբերության զարգացման աշխատանքներ:

ԱՌՈՒԵ ԳԱԼՍՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

«Շամիրամի» հավակնությունները Ազգային ժողովում

«Շամիրամ». այդքան մոտիկ ու այդքան անհասանելի: եւ միայն նրանց տեսությանն արժանանալու համար ես լրագրողս, կորցրեցի մեկ շաբաթ: Համառ եմ, ուստի չզլացա «Լեւոն բրավլի» գրասենյակում ժամադրություն նշանակած, սակայն չներկայացած ՀՀ արտգործնախարարի տիկնոջը սպասել մեկ ժամից ավելի: Երեք օր շարունակ հեռախոսային կապով փափագեցի լսել «Շամիրամի» քաղաքական թիվ մեկ լիդերի Գայանե Սարուխանյանի ձայնը, որին հասա միայն ծանոթների բարեխոսությունից հետո: Իսկապես խորհրդավոր են «կանացի բոլոր շերտերից» հասարակական քաղաքական կազմակերպություններում ընդգրկված շամիրամները, որոնք ՀՀ Ազգային ժողովին են ուզում անդամագրվել «քաղաքական բարձունքներ նվաճելու համար»: Իսկ անունը ընտրել են, որովհետեւ «նա մեր բազավորին սիրել է», իսկապես, «դրա մեջ վատ բան չկա»: Լիովին համաձայն եմք «Շամիրամի» նախագահ Գայանե Սարուխանյանի հետ, որը Շամիրամի ջրանցքի նման ամուր կազմակերպություն է եւ ազգում ստեղծել: «Եւ եթե պետությունը խելոք գտնվի նրանց կիսվանավորի, որովհետեւ պետության ներսում կանանց կազմակերպություն է ձեւավորվում եւ, եթե նրանք կնոջ ուսերին ոչ արժանավայել բեռ են դրել, պետությունն անպայման պետք է ընդառաջ գնա»:

Ո՞րն էր բեռը. «կնոջ դերը քաղաքական ասպարեզում բարձրացնելը, որ թեզքի մեր ձայնը ուժեղ հնչի», ասում է թիվ մեկ «Շամիրամը» եւ հորդորում, որ այդ «շատ գեղեցիկ, շատ ազնիվ, շատ մաքուր գործի կայացմանը, որին հաճույքով են զինվորագրվել», օգնենք նաեւ մենք:

Կայացմա՞նը, իհարկե, բնավ էլ զարմանալի չէ, որ չկայացած կազմակերպությունը կանացի հիմնախնդիրները կարող էր նաեւ չոտակերացնել, բայց ՀՀ Ազգային ժողովին 40 հոգանոց հանդամասնական ցուցակ կարող էր ներ կայացնել:

Թեղեեե

ՕԵՐԻՑ ԿՅԱՆՔ

ԳՐՈՂՆԵՐԻ ՏՈՒՆ

Երկխոսություն

Այն սկսվեց նոռածնի բաբուջներից: Երկար ընդմիջումից հետո Հայաստանի գողոնների միության անդամները ստացան հերթական օգնությունը ամեն մեկը մի փակ տոփ, մեջը նոռածնի վեց զույգ բաբուջ, նաև երկուական տփակ ժամկետանց դեղորայք: «Պատկերացնում եմ բախտաժդ ջանքերը դուսք ձեզ բերելու համար, ասում եմ խոսակցիս, որ գողոնների միության նախագահն է, բայց լավ կլիներ, երբ նոռածնի բաբուջները գողոնների ամենից նվիրաբերվեր որևէ ծննդյան, ուրախացնելով ծննդյանները»: «Ինչո՞ւ, գողոնները ոչեմ չէ՞ր, գողոնների տներում նոռածիններ չկա՞ն»: «Երևի հարյուրից քանիսի՞ տանը: Նրանց էլ ոչեմ չէր վեց զույգ, վեցն էլ նույն չափսի:» «Իսկ ի՞նչ էիր ուզում տայի, ոսկի՞»: Ինչու այդ դահին նրա աչքին հենց ոսկի երևաց: «Թողք ու բանավ տայիր, ասում եմ, այդ էլ է գլխներիս կտրվել»: «Բաբուջ արտադրողից ոեզ համար թողք ու բանավ խնդրեի, մտադրությունը բաբուջ էր»: Խոսակցությունը կասակի երանգներ չունի, լուրջ է ու կոշտ: «Ի՞նչ անենք, որ դու դժգոհ չմնաս», շարունակում է նա: «Ինձ համար ոչինչ»: «Քեզ ոդարտական ե՞նք»: Ուզում է խոցել: Բայց ինչո՞ւ: Ես նրանից ոչինչ չեմ խնդրել: Եթե մի բանից դժգոհ եմ, եթե մի բան կուզենայի դահանջել գողոնների միության դեկավարությունը ստանձնողից, այն է եղել և այն է, որ վերադարձվի գողոնների միությանը իր կորցրած դեմը, վերադարձի իր կորցրած տեղը հասարակական կյանքում, գրական ընտանիքը ուժ գտնի իր մեջ մոռանալու մուրացիկի իր վիճակը և հարգահարի այն, ոչ թե մեռոյի դահտեի տակ, վիզը ծռած նստած անդամալույծի դեմ սդասի, թե ով ինչ է դնելու իր դարգած ափի մեջ:

Գողոնների միությունը հիշ ունեցվածքի տեր չէ, որ օրը գնեկով հափշտակում են նրանից. մենք դրվիդի նիկայի կնար. մենք գրասենյ, մի գիտաչ դասում է Աստվի ստեղծագործական տան գլխին, նա չէ մեկ ուրիշը բարը կդնի դրա վրա: Գործունյա մարդ հոսար անհնա՞ր էր դրանցից մեկնումեկի արժեքով մի տղարան ձեռ բերել, տեղն էլ ունենք գողոնների տան նեղենարկը: Հանդատը, որ հայ գրականության երեսելիներից է, տղարանային բանվոր էր, այդպես էր վարակում ու իր հացը. ու հոգում իր գրերի տղագրության ծախսերը: Մեծ անդասվորյո՞ւն կլիներ, եթե Հայաստանի գողոնները էլ աշխատեին իրենց տղարանում, դուրս գային մուրացողի վիճակից ու դասվերներից զոյացած միջոցներով տղագրեին սեփական ստեղծագործությունները. այնուան ժամանակ, մինչև ոսի կանգնեին չի նվիրվեին միայն գրականությանը: Գուցե կարելի է այլ ավելի խելացի միջոցներ ու ձևեր գտնել գողոնների մուրացկանի վիճակից դուրս բերելու համար: Ո՞ւմ դարտակությունն է այդ անեկ. եթե ոչ գրական կյանքը տնօրինողների, որոնց ամենօրյա աշխատանքի հիմքում այս խնդիրներ դեռ է լինեն: «Քո կարծիքով մենք գործ չենք անում, ձեռքերը ծալած նստա՞ծ ենք», ասում է նա խոսակիցը: «Երբ արվեր կտեսնեի. ինքս էլ մասնակից կլինեի», ասում եմ ես. գրական լուրջ ասուլիսներ, գրականության աոջև ծառացած օրվա խնդիրների քննարկումներ գաղտնի հո չեն արվում, որ չիմանանք: Նախագահը ե՞րբ է այս մասնակցությունով մեզ հավաքել, կամ իր մոտ հրավիրել մեկիս. մյուսիս. հետաքրքրել, թե ով ստեղծագործական ինչ կյանքով է ապրում, ստեղծագործական ինչ հոգսեր ունի, որ կարելի է հոգալ: «Ամեն ուրբաթ օր քարտուղարության նիստեր ենք անում, ասում է նախագահը, դուրս բաց է. արի նստի ու կիսմասաս ինչ ենք անում»: «Երբ դեռ եմ զանգահարել, բանուգործ բաղնեմ գամ»: Նախագահը ոչ տանում, ոչ բերում, ասում է. «Դու ինձ դեռ չես»: Ինչդե՞ս թե: Ո՞վ ես դու ես ո՞վ եմ ես, որ ինձ դեռ գամ, կամ դեռ չգամ:

Ավելի քան հիսուն տարի գրողների միության անդամ եմ, շատ նախագահներ են եկել գնացել, չեմ լսել, որ նրանցից մեկը այսդիսի բան ասած լինի գրողներից բեկուզ ամենաեսնյալին: Ընդունված էր կարծել, որ ղեկավարն է գրողների համար, ոչ թե գրողները ղեկավարի: Գրողներն ասում էին դու մեզ դեռ չես ես ազատվում էին նրանից: Բայց ի՞նչ իմանամ: Ժամանակները փոխվել են: Կյանքը գլխիվայր շուռ է եկել: Գուցե հարկաստ ենք դարձել նախագահին ես ով վճարունակ չէ, նրան իրավունք ունի ասել «դու ինձ դեռ չես» ես վտարի միությունից: Ամեն բանի գնեմ է դաստաս լինենք: Լրատվական միջոցներից հայտնի դարձան դեպքեր, երբ ձեռնարկության տնօրենը, սեփականաշնորհման դեռևս հեռավոր հոտն առնելով, շտապել էր իր ոդջ ձեռնարկությունը սեփականաշնորհել ինքն իրեն, ապա իբրև սեփականատեր այն վաճառել մեկ ուրիշին, ձեռնարկության աշխատողներ՝ առավոտյան եկել տեսել են ձեռնարկությունը նոր տնօրեն ու նոր տեր ունի, որն ուզենալու դեպքում բոլոր աշխատողներին կարձակեր, կընդուներ նորերին ես կամ կդարձներ նրանց իր նոր տիրոջական դայմանները: Անտիսոր. եթե չասենք արտասոց եղան գրողների վերջին հանդիպումներն ու ընտրությունները: Ղեկավարներից մեկը հանրաքվեությունում չէր, մյուսը հինգ տարի առաջ չէր գնացել ես ասասել էլ չէր կարող, արձակուրդը ձեռակերտեց հանդիպումների շեմին, նախագահն էլ բուժման կարիք ուներ, բուժման գնաց, տեղապահ բոլորն էլ ոչ ոք չունեն նախագահական հանձնաժողովներում, որոնք իբրև թե կան, իբրև թե գործում են, ես նրանց գլխավոր անելիքն այդ էլ դեռ է լինի, բայց որոնցից առնվել է միջանկյալ օղակի դերն իսկ, ինչո՞ւ նրանց կարծիքը հարցնող ու հաշվի առնող չկա՝ բեկուզ մրցանակ շնորհելուց հետո:

Ինչո՞ւ է խորացվում գրողների միության դիմագրկումը: Գրողների միությունը այսդիսով չի՞ վերածվել կույր աղիի դես մի բանի, որ մի օր էլ կտրում նետում են: Գրողների միությանը չի՞ սդասնում այն գրախանութների ճակատագիրը, որոնց փոխված ցուցանակների վրա կարդում ենք «Առևտրի սրահ», «Կազինո» ես այլն:

Այս տագնապները միայն իմը չեն ես նոր չեն: Այս տագնապներն են այն երկխոսության հիմքում, որ վարում եմ այժմ նախագահի հետ. կարելի է ասել «ոտի վրա»: Դատահարար Լիսի հանդիպել, դատահարար նույն օրը եկել Լիսի նույն ներկայացումը դիտելու. նստած Լիսի իրար կողքի ես բնականաբար խոսքի դեռ է բռնվեինք: Ներկայացումը Լիս է ասել, թե հաղող էր, ներկայացողները երիտասարդ ու հմայիչ դերասան-դերասանուհիներ: Բայց տան վերադարձա ոչ թե ներկայացման հմայքի, այլ այն դատնությունը ուղեկցությամբ, որ «դարգեալ» էր ինձ իմ նախագահը:

Նախագահ դառնալուց դեռ շատ առաջ նա ինձ համար սիրելի մարդ էր ես սիրելի բանաստեղծ: Հանդիպելիս, իրար նկատմամբ բարյացակամ Լիսի, սիրալիր ու ուրախաց գրուցում Լիսի, եթե անգամ տարակարծիք Լիսի: Խոսում Լիսի նույն իրար հասկանալի մարդկային, նույն մտահոգություններով ապրող գրողների լեզվով: Ինչո՞ւ օտարացանք այնքան, որ խոսում ենք, ասես, ոչ նույն լեզվով ես իրար չենք հասկանում:

Գրողների միության ներսում միշտ էլ եղել են խմբավորումներ ես անդամ բախումներ հիմնականում փառի ես արտոներ գրավելու շուրջը: Խմբավորվելու անհրաժեշտություն ունեին ամենից շատ ստեղծագործական տկար ուժերը. առաջին հերթին հենց նրանք էլ միավորվում էին, բռնցվում, դառնում ուժ, իրար օգնում գրավելու արտոներ. դառնում դրության տերն ու տիրանում նաև փառքի: Հիշենք, թե ովքեր են եղել այդ արտոնների նստած, որ հանդարտ դասակարգն անուն ունեին. բայց բավական էր իջնեին արտոից ու դեռ ոդջ մոռացվեին: Առաջավոր ժամանակներ էին. խենց բնորոշ արատներով. ժամանակները փոխվեցին, արատները ինչո՞ւ չվերացան, այլ խորանում են ու դառնում տարաբնույթ:

Ամիսներ առաջ փորոցում հանդիպեցի գրողներից մեկին: Անասելի բորբոքված էր: Աշխատանքներ ուներ ու կորցրել էր: Այսօրվա օրը աշխատանք կորցնել: Աշխատանքից ազատելու հրամանը ստորագրողը նույնպես գրող է եղել՝ իր գրական մտերիմ ընկեր: Գրական մտերմությունը վերջ է գտել. գրական նախասիրությունների բնդհանրությունը մնացել է մի կողմ, իրենք դարձել են տարբեր գաղափարների կրողներ գաղափարական հակառակորդներ. հայտնվել է մեկը գնի այն, մյուսը այս կողմում, ես այլևս բշնամիներ են, անողոքաբար գնդակոծում են իրար: Դա, որ գնի այն կողմում է հայրդ կամ է, դրության տեր: Չի նեռում այս կողմում գտնվողի այսկողմայնությունը, ուժ ունի ներում է տան: Վաղը ուժերն ու դրության տեր սա կլինի, սա կենդի մյուսին: Հանուն գաղափարի, ինչպես որ առում էր անցյալ անիծված ժամանակներում ընկերն ընկերոջը արտից գլորում, նստում էր տեղը, ասում էր ուղարկել տալիս զավթում բնակարանը, նրան մնջեցից վերացնում, որ ինքը մնա գրական անդասանի առաջին դեմքը: Ի՞նչ փոխվեց: Առաջվանից ոչ դակաս հոտոտում են իրար, անգամ իրար ճակատի գնդակ արձակում: Այն ժամանակ դրսևորվում

ԱԶԳ

Միջազգային

ՊԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

«Լիբանանեան Ուժեր»ու ղեկավար Սամիր Ջաաջայի դատավարութիւնը եւ նախադրեալները

Ծեր հանրապետության ղեկավարներից ոմանք վերջերս սկսել են դիմել Լիբանանի օրինակին՝ մասնագույն անելու համար ահաբեկչության մասները: Իսոսք չկա, լիբանանյան 16-ամյա պատերազմը իր սարսափներով, բռնություններով, տեղական, շրջանային եւ միջազգային հետեւանքներով, դեռ երկար ժամանակ կարող է ուսուցողական, դասիարակչական օրինակ ծառայել, նախազգուշացնող դաս լինել բոլոր երկրների ու բոլոր ժողովուրդների համար, որպեսզի ճիշտ կազմակերպեն իրենց գործերին կյանքը, անվտանգությունը, ամուր փակվեն արտաքին վտանգների ու ներքաքանցումների դիմաց: Այնուամենայնիվ, լիբանանյան պատերազմը, որը ոմանց կողմից կոչվում է նաեւ «քաղաքացիական պատերազմ», գլխավորապես ծնունդ է Իսրայել-Արաբական ավյարի, ավելի ճիշտ՝ Իսրայել-պաղեստինցիներ հակամարտության հողի վրա, որի առկայության պարամետրերում, լիբանանյան դեպքերում, ներքին հաղթական-հասարակական հոսանքների ու համայնքների գլխավոր մեղքը եղել է իրենց... անգործությունը արտաքին խաղաղանքների ու ներքաքանցումների դեմ: Այնուամենայնիվ, լիբանանյան փորձառությունը մեկ անգամ եւս ցույց է տալիս այն ճշմարտությունը, որ ամեն մի ոճիր եւ բռնարարք ի վերջո պատժվելու է: Ճիշտ է, այս օրերին այդ արյունահեղությունների կազմակերպիչներից ընդամենը մի փոքր մասն է կանգնել դատարանի առաջ (մի մասն էլ իր «բնական» վախճանն է գտել փոխադարձ վնասներ՝ հետեւանքով), սակայն այդ չի նշանակում, որ մյուս հանցագործներն էլ հետագայում չեն լսի արդարության ձայնը՝ դատարանի դահլիճից: Այս օրերին դատարանի առաջ է կանգնած այդ գլխավոր հանցագործներից մեկը՝ երբեմնի ամենահզոր «Լիբանանյան ուժեր» զինված կազմակերպության (ֆրիսոնյա) առաջնորդ Սամիր Ջաաջան իր օգնականների խմբով, որի մասին էլ գրում է մեր աշխատակիցը:

առուծախը: Լիբանանեան հաղաքացիական պատերազմի վերջին արարը, որ տեղի ունեցաւ մէկ կողմէն Սամիր Ջաաջայի գլխաւորած «Լիբանանեան Ուժեր»ուն, միւս կողմէ զօրավար Միշել Աունի «հավատարիմ» լիբանանեան բանակի միաւորներուն միջեւ՝ քառասուն եւ Լեռնալիբանանի ֆրիսոնեայ շրջանները: Փաստօրեն, լիբանանցի մարդնիր ֆրիսոնեայ համայնքի «ամերիկաստր» հաղաքական-ռազմական թեւը հաղաքական բաստերաբեմէն ժամանակնաւորապես (կամ մշտապես...) հեռացուց 700 ամեայ ֆրանսական ազդեցութիւնը, որ տարածուած էր Լիբանանի վրայ խաչակիրներու ու ֆրանկ ասպետներու արշաւանքներու ընթացքին: 1990թ. Միշել Աունի դէմ Ֆրանսա տեղափոխուելէ ետք, ֆրանսական բանակի եւ հետախուզութեան յատուկ միաւորներուն կողմէ շրջան մը հաղաքական «մեղրամիս»ի մը նոյնորս տիրեց մէկ կողմէն (Սուրիոյ մօտ) ամերիկեան այն ժամանակուան դեսպան է. Ճերեճեանին եւ արաբական ատաշարի ու մեղադոյն ղեկավարներէն Հաֆեզ Ալ Ասադին, իսկ միւս կողմէն «Լիբանանեան Ուժեր»ուն եւ իսրայէլեան հաղաքական-ռազմական շրջանակներուն միջեւ: Նոյնպէս Մեծաւոր Արեւելքի «Սաանայ» (...) Սադդամ Հիսէյնի չեզոքացումն էր, Իրաքի ռազմական ու տնտեսական, հաղաքական ազդեցութեան ջախջախումը: Արաֆաթի փաստական «անձնասուրութեան» եւ, որ բաւականացաւ Գազա Երիհով ինքնավար գոտուրեամբ՝ իսրայէլեան «խնամակալութեան» տակ, Յորդանանի Հիւսէյն թագաւորը նոյնպէս խաղաղութիւն կնքեց, պատշաճակացնելով յիսնամեակ մը ամբողջ Սիոնական գոտուրեան եւ Հաշեմական թագաւորական տան հետ գաղտնի եւ յայտնի կապերը: Հերը հասաւ Լիբանանին ու Սուրիոյ, որոնք մեծ դերձին նոյնպէս «ծունկի գալ» իսրայէլեան ամերիկեան ճնշումներուն առջեւ: Հաֆեզ Ալ Ասադը անխախտօրէն պայման դրաւ Գոլանի բարձունքներու ամբողջական պարպումը «Ցահալ»ի (Իսրայէլի «պաշտպանական բանակ) կողմէ, մինչ Լիբանանի կառավարութիւնը պահանջեց Հարաւային Լիբանանի մէջ ստեղծուած Անբուան Լահդի զինուորական խամաճիկ պետութեան վերացումը եւ այդ հողերուն ու գետերուն լիբանանեան հայրենիք... վերադարձը:

Իսրայէլեան կողմը այս բոլորին պատասխանեց իւրայատուկ ձեւով՝ ջերմ յարաբերութիւններ մշակելով հիւսիսի 60 միլիոնանոց Սուննի մուսուլման Թուրքիոյ հետ, եփրատի ու Տիգրիսի ամբարտակներու փակման սպառնալիքով ճնշելու համար Սուրիան: Անոր միւս խաղաքարտը, անշուշտ, իսրայէլամէտ «Լիբանանեան Ուժեր»ն էին, որոնք Լիբանանի սպանուած նախագահ Բշիր Ժեմայէլի, Ֆեդի Ֆրէյճի, էլի Հոբեյշայի (այսօր կը գտնուի սուրիամէտ լիբանանցի հաղաքական ղեկավարներու շարքին, մոռնալով Իսրայէլի հետ իր սերտ համագործակցութեան տարիները...) եւ Սամիր Ջաաջայի «ժառանգական» ղեկավարութեան օրօք յաջողած էին կարեւոր յենակէտ ստեղծել, որպէսզի հարուածէին Լիբանանի պաղեստինեան դիմադրութիւնը, «Հայրենասիրական ճակատ»ը եւ «Հրգբոլլա»ն ներսէն եւ արտաքին ճակատով: Այնպէս որ, Իսրայէլ-Սուրիա-Լիբանան բանակցութիւններուն առաջին փուլի ծա-



խողման առաջին ժամերէն իսկ, Սամիր Ջաաջան գործի անցաւ հաղաքական եւ ռազմական գետնի վրայ: Իսրայէլեան «Սոսադ»ի (ռազմական հետախուզութիւն) յատուկ լիբանանցի միաւորներ կազմակերպեցին Բէյրութի արուարձան Ձուրի «Սրբ. Տիրուհի» եկեղեցւոյ պայթումը, որուն զոհ գացին բազմաթիւ անմեղներ: Լիբանանի մուսուլման ղեկավարները սակայն, շտապեցին առաջը առնելու որեւէ նոր հաղաքացիական պատերազմի՝ այցելելով ոճիրին վայրը եւ դատապարտելով ոճրագործը:

Շուտով, «Լիբանանեան Ուժեր»ու շարք մը անդամներ ձերբակալուեցան ու հարցաքննութեան ենթարկուեցան բանակի ռազմական հետախուզութեան կողմէ: Անոնց ցուցմունքներով, ձերբակալուեցաւ «գեներալ» Ֆուադ Մալիքը, իսկ հիշ եմ, Ղղդասի իր ամրոց-աղարանէն դէպի Եարզէի զինուորական բանտը առաջնորդուեցաւ երբեմնի ամենակարող, ամենահզօր Սամիր Ջաաջան, որպէս մարոնիք ռազմահաղաքական ղեկավար, ամբաստանուած բազմաթիւ ոճիրներու կազմակերպման համար: Անոր կինը պահանջեց ամերիկեան դեսպանին հետ առանձին տեսակցութիւն: Պահանջը բաւարարուեցաւ ինքնաշարժերու կառասան մէջ, ուր մերժուեցաւ ամենը կարգի օգնութիւն երկի ամերիկեան-իսրայէլեան-«Լիբանանեան Ուժեր»-«Հարաւային Լիբանանի բանակ» առանցքի կեդրոնական դէմքերէն մէկուն: Ըստ որոշ դիտորդներու, Ջաաջան եւ իր լիբանանեան «կայսրութիւնը» զոհ գացին Սուրիա-Իսրայէլ-Լիբանան բանակցութիւններու սեղանին որպէս հնացած խաղաքարտ...:

Որոշ ժամանակ անց, որպէս Լիբանանի հաղաքացիական պատերազմի, անցեալի հաղաքական ոճիրներու առաջին թղթածրար՝ սկսաւ Սամիր Ջաաջայի եւ իր գործակիցներուն «բաց» դատավարութիւնը: Ձուրի եկեղեցիին պայթման կազմակերպման մէջ ամբաստանուելէ զատ (միշտ մերժուած ամբաստանելին կողմէ, դատավարութեան ընթացքին) «Լիբանանեան Ուժեր»ու նախկին տիրակալը մերժեց նաեւ ընդունիլ, թէ կապ ունեցած է «Ազատ հայրենասէրներու կուսակցութեան» ռազմական ղեկավար, Լիբանանի նախկին նախագահ Քամիլ Շամունի որդի Դորի Շամունի սպանութեան հետ: Վերջինս, իր եւրոպացի կնոջ ու երեխային հետ սպանուած գտնուած էր, մութ պայմաններու մէջ, 1992 թուականի սուրիական զօրերու Արեւելեան (ֆրիսոնեաբնակ) Բէյրութ մուտի օրերուն: Դորիի եղբորը՝ Դանի Շամունի, 1978-ին եւ 1979-ին յարձակման ենթարկուելով Լիբանանի սպանեալ նախագահ Բշիր Ժեմայէլի զինեալներուն կողմէ, առաստաղներ էր Արեւմտեան Բէյրութ, առա անցեր էր Արեւմտեան Եւրոպա, ուր մնաց մինչեւ զօրավար Միշել Աունի կարճատեւ իշխանութեան շրջանը, Արեւելեան Բէյրութի մէջ:

Դատավարութեան շրջանին, Դանի Շամունի դուստրը՝ Թրէյսին, որ բռնաբարուած էր իր անչափահաս քոյր՝ Փեթիին հետ՝ այն ժամանակ Բշիր Ժեմայէլի գլխաւորած «Լիբանանեան Ուժեր»ուն կողմէ 1979-ին, Բէյրութ վերադարձաւ ներկայ գտնուելու Սամիր Ջաաջայի դատավարութեան: Հետաքրքրական էր, որ պետական նախարար դարձած էլի Հոբեյշան, որ Լիբանանի յաջորդ նախագահական ընտրութիւնները գլխաւոր թեկնածուներէն կը նկատուի, Արդարադատութեան պալատին մէջ կայացած Ջաաջայի դատին խօսեցաւ այն անքիւ ոճիրներուն ինքնաբարձի պայթեցումներուն, մահափորձերու, խմբակային զնդահարման ու զանգվածային ջարդերուն մասին, որոնց մեծ մասին ինքն ալ մասնակից դարձած էր (...) եւ որոնք այժմ «մոռացուած կը մնան» հաղաքացիական պատերազմի աւարտին հրադադարկուած ներման հրամանագրով: 1978-1992 թթ. Լիբանանի հաղաքացիական պատերազմի շուրջ մէկ միլիոնի հասնող զոհերը, հաշմանդամները, «անհետ կորածները», մինչեւ այսօր Իսրայէլի ու Սուրիոյ բանտերուն մէջ արգելափակուածները, առեւանգուածները («ցնոր տօրինութիւն»...) նկարագրելու համար բերեւ պէտք են միլիոնաւոր էջեր, որպէսզի պատմեն անպատմելի, մարդկային «գերիրաղաշ» երեւակայութենէն ալ խստմնելի, զազրելի սպանդներու, ահաբեկումներու, «մարագործումներու» մասին, որոնց գլխաւոր զոհը գերազանցապէս անմեղ ժողովուրդն ու անցորդներն էին: Սակայն եւ այնպէս, այն բոլոր կուսակցութիւններուն, շարժումներուն եւ կողմերուն ղեկավարները, որոնք հսկայական գումարներ, զէնք ու զինամթերք, հանդերձանք, հաղաքական-զինուորական հնարաւորութիւններ ստացած էին մեծ տէրութիւններէ, Իսրայէլէն, Սուրիայէն, Իրանէն, եգիպտոսէն եւ Ալժիրէն՝ ունեցան ահաւոր մահեր: Անոնցմէ ոմանք չունեցան նոյնիսկ «ժառանգորդ» մը որպէսզի կարողանար «հանգիստ խղճով» աղրիկ բիւրաւորներու տառապանքով եւ արիւնով շաղախուած այդ յուդայական արծաթներով:

ՀԱՍՊ ՄՈՍԿՈՊԵԱՆ,
Բէյրութ

ՀԱՄԱՌՈՏ

ՆԱՏՕ-ի ընդլայնումը լուծված գործ է, հավաստիացնում է Քլինթոնը Հավելին

ՆԱՏՕ-ի ընդլայնման գործընթացը շարունակվում է վաղ նշված ծրագրերին համապատասխան, հայտարարել է ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը իր չեխ գործընկեր Վացլավ Հավելին ուղղված նամակում, որում նրան տեղեկացրել է Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինի հետ այդ հիմնախնդրի շուրջը վերջերս տեղի ունեցած բանակցությունների մասին: Փաստաթղթում, որի շարադրանքը տարածվել է ուրբաթ օրը Պրահայում, ընդգծվում է, որ Կենտրոնական Եվրոպայի պետությունների թվից նոր անդամներ հյուսիսատլանտյան դաշինք ընդունելը որոշված գործ է: Ռուսաստանի Դաշնության ղեկավարությունը պետք է հասկանա, նշվում է նամակում, որ հյուսիսատլանտյան դաշինքն զուտ պաշտպանական կառույց է եւ ոչ մեկին վնաս չի սպառնում: ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ընդլայնվել են Ուկրաինայի նախագահի լիազորությունները

Ուկրինֆորմը հաղորդում է, Ուկրաինայի Գերագույն խորհուրդը հինգշաբթի երեկոյան ընդունել է պետական իշխանության մասին օրենքը, որը նախագահին տալիս է լրացուցիչ լիազորություններ՝ մասնավորապես հանրապետության կառավարությունը ինքնուրույն կազմավորելու իրավունք: Նոր օրենքի համաձայն, պետության ղեկավարը ստանում է նաեւ իրավունք՝ նշանակել եւ փոխել տեղական վարչակազմերի ղեկավարներին: ԱՐՄԵՆՊՐԵՍ

Նոր տերմին Ռուսաստանի ֆինանսական բառապաշարում

Հունիսի սկզբին Մոսկվայի միջբանկային տարադրամային բորսայում կայացավ նոր արժեթղթի՝ համապետական փոխառության բաժնետոմսի տեղաբաշխում: Համապետական փոխառության բաժնետոմսն իրենից ներկայացնում է պետական արժեքուղթ մեկ տարուց ավելի մարման ժամկետով, որը կունենա փոփոխական եւ արժեկտրոնային եկամուտ, այս մասին հինգշաբթի օրը կայացած մամլո ասուլիսում հաղորդել է Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի փոխնախագահ Անդրեյ Կոզլովը: Հենց նույն մամլո ասուլիսում ֆինանսների նախարարության ֆինանսական տուկաների եւ արժեթղթերի գերատեսչության տնօրեն Բելա Զլատկիսը հայտնել է, որ մայիսի 18-ին Ռուսաստանի նախագահը հրամանագիր է ստորագրել «այն ոսկու հանկության մասին, որը կավանդադրվի ոսկու հավաստագրերի բողարկման համար»: Բելա Զլատկիսը հրաժարվել է հայտնել ավանդադրվող ոսկու ծավալը, բայց հիշեցրել է, որ բյուջեի համաձայն, այս տարի նախատեսվում է տեղաբաշխել երկու տրիլիոն ռուբլու ոսկու հավաստագիր, հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԹՈՒՐՔԻԱ

Ս. Դեմիրել. «Ղրիմի թաթարների ցեղասպանությունը մարդկության ամոթն է»

TRT 6 հաղորդում է, որ նախագահ Ս. Դեմիրելը Անկարայում իր Չանքայա նստավայրում ընդունեց Ղրիմի թաթարների հետ համերաշխության եւ մշակութային կապերի ընկերության դատավիրակությանը: Ընդունելության ընթացքում շոշափվեցին Թուրքիայի եւ Ղրիմի թաթարների միջեւ հաղաքական, տնտեսական ու մշակութային կապերի ամրապնդմանն առնչվող մի շարք խնդիրներ: Դեմիրելը մասնավորապես ասաց. «Աղշիսիկից մինչեւ Չինաստան ձգվող այդ հսկա տարածքում գոյատեւում-են շուրջ 200 միլիոն թուրքեր եւ թուրքական ծագում ունեցող ժողովուրդներ: Պատմության ընթացքում այդ ժողովուրդները ստեղծել են հաղաքակրթության ներ ու պետություններ: Բայց ժամանակի ընթացքում այդ պետությունները փլուզվել են, կորցրել իրենց սեփական տարածքներ, իսկ ժողովուրդները օտար ուժերի կողմից ենթարկվել են անհեւանալի չարագործությունների: Ինչ վերաբերում է Ղրիմի թաթարներին, ապա նրանք եղել են Օսմանյան կայսրության բաղկացուցիչ մասնիկը: Այսօր բոլորն են ընդունում, որ կոմունիստական չարիքից հատկապես տուժեցին Ղրիմի թաթարը: Բայց այսօր ժամանակները փոխվել են, եւ գեղեցիկ ապագայի համար լույսի մի նոր շող է բացվել: Հավելի առնելով այդ հանգամանքը, վերջին ժամանակներս կես միլիոն թաթար վերադարձան Ղրիմ: Ես կարծում եմ, որ այս երեւույթը գնալով մեծ թափ կստանա, եւ դրանում ոչ մի վատ բան գոյություն չունի: Այս պարագայում Թուրքիան ցուցաբերում է անհրաժեշտ օգնություն ու աջակցություն: Բայց դա պետք է արվի զգույշ ու շատ մտածված, որպեսզի որեւէ մի երկիր դրանից չտուժի եւ անախորժություններ չառաջանան»:

Այնուհետեւ Դեմիրելը ասաց «Թուրքիան միշտ էլ կլինի աջակիցը թաթարների դրսեւսկ ու հայրը: Ղրիմի թաթարների հիմնահարցը Թուրքիայի օրակարգում է, եւ առանց դրան մեկին անհանգստացնելու նրանց հետ կապերի ամրապնդումը մեր պետական հաղաքականության բաղկացուցիչ մասն է»:

Պատվիրակությանը ընդունեց նաեւ Թուրքիայի խորհրդարանի նախագահ Հ. Ջինդորուքը: Բանակցության ընթացքում ընկերությունը նախագահ Ահմեդ Իհսան Ղրիմին ասաց, որ 1944 թ. մայիսի 18-ին սկսվեց Ղրիմի թաթարներին իրենց սեփական հայրենիքից ամստրելու ներքաքանցը: Իսկ Ջինդորուքը նշեց «Շուրջ 50 տարի առաջ Ղրիմի թաթարների նկատմամբ իրագործված գենոսպանությունը ամբողջ մարդկության դեմ գործված հանցագործ է, եւ այս առումով մարդկությունը պարտավոր է վերջիններից ներողություն խնդրել: Ղրիմի թաթարներին օգնելով մարդկությունը կմաքրի իր մեղքերը: Մեր կարծիքով, ֆաշիզմի եւ նշված ցեղասպանությունն իրագործած կոմունիստական վարչակարգի միջեւ որեւէ տարբերություն գոյություն չունի: Այս առումով միակ մխիթարությունն այն է, որ աշխարհն այսօր այդ վարչակարգից ազատվել է»:

ԳԵՐՄԱՆ ՅԱՐԵՏՅԱՆ

AMV AGRO-TRADE
Առաջին անգամ
ԱՄՆ
ԱՌԱՔՍԱՊՐՈՒՏ Է
ընտանեկան հանգիստ
Սեւ ծովի հարավային ափին
Սոզոպոլում (Բուլղարիա)
Թավշյա լողափ, առանձնատներ,
սենյակը օրական 2 անգամ
Հունիսի 15-ից սեպտեմբերի 15-
Ուղեգրերի քանակը սահմանափակ է
«ԱՆԻ» հյուրանոց, 523, 530 սի
Հեռ. 524-265, 594-521, 565-1

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Զանգվածային գիտակցությունն արվեստից առապելներ էր պահանջում

Ներկայումս վերանայվում եւ զգալի չափով հերքվում է Հոկտեմբերյան հեղափոխության, հաղթանակի եւ Հայրենական պատերազմների, Խորհրդային Միության պատմության բազմաթիվ իրադարձությունների գրեթե ամբողջ փաստական կողմը: Մինչդեռ այդ փաստերի եւ իրադարձությունների վրա է կառուցված խորհրդային արվեստը: Այսօր պարզվում է, որ խորհրդային մշակույթի գրեթե ամբողջ փաստական հիմքը ապասում է զգալի թվով պատմահեղափոխական ֆիլմեր: Դրանց մեջ կային նաեւ այնպիսի երկեր, որոնք իրենց գեղարվեստական մակարդակով առանձնանում են կինոարտադրանքի ընդհանուր ֆոնի վրա: Դրանց մի մասի անվանումները մինչեւ օրս շատ բան են ասում հայ կինոդիտողին. «Կիկոս», «Մեխիկական դիվանագետներ», «Զանգեզուր», «Անձամբ ճանաչում եմ», «Արտակարգ հանձնարարություն», «Սարոյան եղբայրներ», «Ենոնդ»...

Որեմն ինչպե՞ս վարվենք հոգեւոր ժառանգության այդ մասի հետ: Այն համարենք կե՞ղծ, վնասակա՞ր, անվավե՞ր, հրաժարվե՞նք դրանից:

Երբ այսօր մենք ճիշտ գնահատենք կինոյի այդ առավել առատդեղացված ու քաղաքականացված ժանրի բնույթ մեկ ստեղծագործություն, ապա, կարծում ենք, մեզ համար ավելի ճիշտ կլինի կողմնորոշվել մյուս բոլոր պատմահեղափոխական ֆիլմերում:

Վերցնենք «Անձամբ ճանաչում եմ» հայտնի ֆիլմը: 1957 ին ռեժիսորներ Ս. Կեւորկովի եւ Է. Քարամյանի ստեղծած ֆիլմը գրավչորեն պատմում էր Կամոյի (Սիմոն Տեր-Պետրոսյան) հեղափոխական գործունեության դրվագների մասին:

Կամոյի նման պատմական անձնավորությունների, այսպես կոչված պրոֆեսիոնալ հեղափոխականների կերպարները տասնամյակներ շարունակ շրջադարձված են եղել ռոմանտիկ լուսապսակով: Զանգվածների գիտակցության մեջ նրանք ներկայանում էին որպես բացարձակ հերոսներ: Կամոյի անձի գնահատումը մեր գործը չէ. դա թողնենք մասնագետներին:

Նման ֆիլմերի մասին ոչեմ է դատել միակ հնարավոր չափանիշով. ստեղծագործության մեջ ինչպես է արտահայտվել այն, ինչ ցանկացել են արտահայտել հեղինակները: Ըստ էության, այդ սկզբունքով ոչեմ է դուրս գալիս բոլոր պատմահեղափոխական ժապավենները, ասենք նաեւ ամբողջ խորհրդային կինեմատոգրաֆիան գնահատելիս:

Ֆիլմի առանցքը դերասան Գուրգեն Թոնոյանցի կերտած Կամոյի կերպարն է: Ճիշտ է, չի հաջողվել խուսափել քաղաքական որոշ կլիշեներից, օրինակ «ավագ եղբոր» ստեղծումից: Ֆիլմում Կամոյին կցված է մի որոշ բոլշեւիկ որը նրան խորհուրդներ է տվել բոլշեւիկ դարձնելու մասին: Բայց դերասանը դրան, կինոնկարից դուրս գալով, ոչ միայն մարմնավորեց դերասանական արտասովոր բնակություն այն մարդու դերում, որը Լենինի խոսքերով, բացառիկ նվիրված էր խնդրին եւ եռանդուն: Թբիլիսցի Թոնոյանցի կյանքի միջավայրը ներթափանցված էր այդ հեղափոխականի մասին հուշերով. նա միայն մաքուր գաղափարը, առանց քաղաքականության խառնուրդի:

Կոնկրետ ի՞նչը ոգեշնչեց «Անձամբ ճանաչում եմ» ֆիլմը կերտողներին եւ մասնավորապես Գուրգեն Թոնոյանցին. Կամոյի մասին բան լեգենդը: Վերջինս արբագործված էր ավանդույթով եւ մինչեւ վերջերս անաստակելի համարված այնպիսի հեղինակությունների խոսքերով, ինչպիսիք են Լենինը եւ Գորկին: Ոգեշնչեց հերոսի, անվեհեր ու անբեկի ասպետի մասին առասպելը: Միայն մեկ հատկանշական մանրամասնություն. Կամոն Ակրանին երեսում է որպես ամրակազմ, գեղեցիկ տղամարդ. մինչդեռ հայտնի է, որ կյանքում նա արտաքուստ այդի չի բնկել: Հեղինակներն ուզեցել են, որ Կամոյի կերպարը համապատասխանի հերոսական անհատի մասին իդեալական պատկերացումներին:

Թոնոյանցի հաջողությունը կանխորոշեցին երկու հիմնական գործոններ՝ Կամոյի անձի եւ դերասանի մարդկային անհատականության մերձավորությունը եւ Գորկու այն հայտնի բնութագրումը, որի համաձայն Կամոն «հեղափոխության արվեստագետն էր»:

Առաջին գործոնը դայմանավորեց դերասանի արտասովոր բնակությունը այն մարդու դերում, որը Լենինի խոսքերով, բացառիկ նվիրված էր խնդրին եւ եռանդուն: Թբիլիսցի Թոնոյանցի կյանքի միջավայրը ներթափանցված էր այդ հեղափոխականի մասին հուշերով. նա հեռու էին երկրորդական լինելուց: Էկրանային Կամոյի յուրահատուկ դրսեւորման մեջ զգացվում էր նրա բնավորությունը, նա հեղափոխությանը հավատում էր անձնուրաց կերպով եւ առանց դատողությունների:

«Անձամբ ճանաչում եմ» ֆիլմը հարկավոր է ճնշության առնել ստեղծման ժամանակաշրջանի տեսանկյունից: Հասարակությունը գաղափարայնացված էր նույն չափով, որքան արվեստը: Այստեղ փոխադարձ կապն առկա էր: Արվեստը՝ հատկապես կուսակցական պետական աղարտի կողմից լիովին վերահսկված կինեմատոգրաֆը, խորհրդային իշխանության տասնամյակների ընթացքում ամեն ինչ անում էր ժողովրդին կոմունիստական գաղափարախոսության ոգով դաստիարակելու համար: Զարմանալի չէ, որ այդպես դաստիարակված ժողովրդի գիտակցությունը տգրված էր առասպելներով, որոնք չէին արտացոլում իրականությունը: Պետական քարոզչական մեքենայի գաղափարախոսական սենդիչ վարժեցված ժողովուրդ (մեքենա, որի կարեւորագույն բաժանիչներից մեկը արվեստն էր), կարող էր ընկալել միայն առասպելներ: Արվեստից հենց այդ առասպելներն էր դպահանջում զանգվածային գիտակցությունը:

Այդ դարաշրջանի հետ անհետացան նաեւ դրա մոդուրությունները կամ, ավելի ստույգ խոսելու՝ դրանք դարձան ավելի ուժեղ: Բայց ֆիլմի ռոմանտիկ ոճին ներդաշնակած հեղափոխականի կերպարի այդ գծերը դարձան ստեղծել է զգալի թվով պատմահեղափոխական ֆիլմեր: Դրանց մեջ կային նաեւ այնպիսի երկեր, որոնք իրենց գեղարվեստական մակարդակով առանձնանում են կինոարտադրանքի ընդհանուր ֆոնի վրա: Դրանց մի մասի անվանումները մինչեւ օրս շատ բան են ասում հայ կինոդիտողին. «Կիկոս», «Մեխիկական դիվանագետներ», «Զանգեզուր», «Անձամբ ճանաչում եմ», «Արտակարգ հանձնարարություն», «Սարոյան եղբայրներ», «Ենոնդ»...



Որեմն ինչպե՞ս վարվենք հոգեւոր ժառանգության այդ մասի հետ: Այն համարենք կե՞ղծ, վնասակա՞ր, անվավե՞ր, հրաժարվե՞նք դրանից:

Երբ այսօր մենք ճիշտ գնահատենք կինոյի այդ առավել առատդեղացված ու քաղաքականացված ժանրի բնույթ մեկ ստեղծագործություն, ապա, կարծում ենք, մեզ համար ավելի ճիշտ կլինի կողմնորոշվել մյուս բոլոր պատմահեղափոխական ֆիլմերում:

Վերցնենք «Անձամբ ճանաչում եմ» հայտնի ֆիլմը: 1957 ին ռեժիսորներ Ս. Կեւորկովի եւ Է. Քարամյանի ստեղծած ֆիլմը գրավչորեն պատմում էր Կամոյի (Սիմոն Տեր-Պետրոսյան) հեղափոխական գործունեության դրվագների մասին:

Կամոյի նման պատմական անձնավորությունների, այսպես կոչված պրոֆեսիոնալ հեղափոխականների կերպարները տասնամյակներ շարունակ շրջադարձված են եղել ռոմանտիկ լուսապսակով: Զանգվածների գիտակցության մեջ նրանք ներկայանում էին որպես բացարձակ հերոսներ: Կամոյի անձի գնահատումը մեր գործը չէ. դա թողնենք մասնագետներին:

Նման ֆիլմերի մասին ոչեմ է դատել միակ հնարավոր չափանիշով. ստեղծագործության մեջ ինչպես է արտահայտվել այն, ինչ ցանկացել են արտահայտել հեղինակները: Ըստ էության, այդ սկզբունքով ոչեմ է դուրս գալիս բոլոր պատմահեղափոխական ժապավենները, ասենք նաեւ ամբողջ խորհրդային կինեմատոգրաֆիան գնահատելիս:

Ֆիլմի առանցքը դերասան Գուրգեն Թոնոյանցի կերտած Կամոյի կերպարն է: Ճիշտ է, չի հաջողվել խուսափել քաղաքական որոշ կլիշեներից, օրինակ «ավագ եղբոր» ստեղծումից: Ֆիլմում Կամոյին կցված է մի որոշ բոլշեւիկ որը նրան խորհուրդներ է տվել բոլշեւիկ դարձնելու մասին: Բայց դերասանը դրան, կինոնկարից դուրս գալով, ոչ միայն մարմնավորեց դերասանական արտասովոր բնակություն այն մարդու դերում, որը Լենինի խոսքերով, բացառիկ նվիրված էր խնդրին եւ եռանդուն: Թբիլիսցի Թոնոյանցի կյանքի միջավայրը ներթափանցված էր այդ հեղափոխականի մասին հուշերով. նա հեռու էին երկրորդական լինելուց: Էկրանային Կամոյի յուրահատուկ դրսեւորման մեջ զգացվում էր նրա բնավորությունը, նա հեղափոխությանը հավատում էր անձնուրաց կերպով եւ առանց դատողությունների:

«Անձամբ ճանաչում եմ» ֆիլմը հարկավոր է ճնշության առնել ստեղծման ժամանակաշրջանի տեսանկյունից: Հասարակությունը գաղափարայնացված էր նույն չափով, որքան արվեստը: Այստեղ փոխադարձ կապն առկա էր: Արվեստը՝ հատկապես կուսակցական պետական աղարտի կողմից լիովին վերահսկված կինեմատոգրաֆը, խորհրդային իշխանության տասնամյակների ընթացքում ամեն ինչ անում էր ժողովրդին կոմունիստական գաղափարախոսության ոգով դաստիարակելու համար: Զարմանալի չէ, որ այդպես դաստիարակված ժողովրդի գիտակցությունը տգրված էր առասպելներով, որոնք չէին արտացոլում իրականությունը: Պետական քարոզչական մեքենայի գաղափարախոսական սենդիչ վարժեցված ժողովուրդ (մեքենա, որի կարեւորագույն բաժանիչներից մեկը արվեստն էր), կարող էր ընկալել միայն առասպելներ: Արվեստից հենց այդ առասպելներն էր դպահանջում զանգվածային գիտակցությունը:

Այդ դարաշրջանի հետ անհետացան նաեւ դրա մոդուրությունները կամ, ավելի ստույգ խոսելու՝ դրանք դարձան ավելի ուժեղ: Բայց ֆիլմի ռոմանտիկ ոճին ներդաշնակած հեղափոխականի կերպարի այդ գծերը

ԿԱՐԵՆ ՔԱԼԱՆԹԱՐ

ԱԶԳԱԳԻՐ

Կամերային թատրոն

Շաբաթ օրը թատրոնի բեմում կներկայացվի Արա Երնջակյանի «Պարոնայք, ասվեց ինչ կորանվում է...», իսկ կիրակի՝ Երնջակյանի «Կաբարե» բեմադրությունները: Սկիզբը՝ ժամը 17 ին:

Դրամատիկական թատրոն

Շաբաթ օրը թատրոնը կներկայացնի Ժ. Հարությունյանի «Քո վերջին հանգրվանը» պիեսը: Կիրակի օրը կներկայացվի նոր բեմադրություն. Հեմինգուեյի եւ Սելինջերի պատմվածքների հիման վրա ստեղծված «Դյուրիչ շուրթերն այդ»: Սկիզբը՝ ժամը 15 ին:

«Այրարատ» կինոթատրոն

Շաբաթ եւ կիրակի օրերին կինոթատրոնի տեսասրահում կցուցադրվի «Չինական հրաբխ» (ԱՄՆ): Սկիզբը՝ ժամը 10 ին, 12 ին, 14 ին, 16 ին: Փոքր դահլիճում կցուցադրվի ամերիկյան «Գաղտնի խաղեր» ֆիլմը: Սկիզբը՝ ժամը 11 ին, 13 ին, 15 ին, 17 ին: Մանկական տեսասրահում կցուցադրվի ամերիկյան «Վկան» ֆիլմը՝ ժան Կլոդ Վան Դամի մասնակցությամբ: Սկիզբը՝ ժամը 12:30 ին, 14:30 ին, 16:30 ին: Իսկ 10:30 ին ֆիլմի ցուցադրումը բարեգործական կլինի (անվճար):

«Նաիրի» կինոթատրոն

Շաբաթ եւ կիրակի օրերին կինոթատրոնը կցուցադրի ամերիկյան ֆիլմեր: «Քայլ թագուհիով» ֆիլմը կարող են դիտել ժամը 11 ին, 14:50 ին, 16:45 ին, 18:40 ին, 20:30 ին: «Տեղողության ակնարք» ֆիլմը կցուցադրվի 10:30 ին, 12:20 ին, 14:10 ին, 16:05 ին, 20:15 ին: Այս տարի Օսկար ստացած «Ֆորեստ Գամպ» ֆիլմը կցուցադրվի 17:55 ին:

ԵՐԵՎԱՆ

Խնկո Ապոր գրադարանը նշեց Ռազմիկ Դավոյանի 55-ամյակը

Երեկ Խնկո Ապոր մանկական գրադարանում Ռազմիկ Դավոյանի 55-ամյակին նվիրված մի միջոցառում էր կազմակերպվել: Ներկա էր նաեւ գրողը:

«Պոեզիան այն էներգիան է, որն իբրեւ գոյության հիմք, անհրաժեշտ է բոլոր տարիքի մարդկանց: Այդ էներգիան աշխատեցնելու հրաշալի մեխանիզմ է դրված Խնկո Ապոր գրադարանում», իր խոսքում ասաց Հայաստանի գրողների միության նախագահը:

Միջոցառման ընթացքում հատվածներ հնչեցին նրա պոեզիայից եւ արձակից: Դավոյանի «Ղարաբաղ» բանաստեղծությունը կարդաց ասմունքող Սիլվա Յուզբաշյանը: Երգչուհի ունեցան նաեւ Ռազմիկ Դավոյանի գրականության մասնագետները:

Գրադարանը Ռազմիկ Դավոյանին հանձնեց Մինաս Ավետիսյանի նկարների գիրք՝ որպես միջոցառումից մի հուշ:

ՄԵՏԱՔՍՅԱ ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՀԱՄԱՈՍ

Լույս տեսավ «Օրեր» շաբաթաթերթի անդրանիկ համարը

Երեկ լույս տեսավ «Օրեր» ազատ շաբաթաթերթի առաջին համարը: «Շանդալից ասպարեզ մտած «Շրջան» շաբաթաթերթի ստեղծագործական գրեթե ողջ կազմը, որն իր կարճատեւ գործունեությամբ եւ ստեղծած ավանդներով որոշակի երանգներ մտցրեց հայ մամուլ, հանգամանքների բերումով՝ երկամսյա լռությունից հետո սրանով փորձում է սկիզբը դնել մի նոր թերթի», գրում է թերթը՝ շաբաթաթերթից եռօրյա կդառնա, երբ իր ազատ խոսքի գործունեությունն օժանդակող մեկը գտնի: Հիմնադիր հրատարակիչներն են գլխավոր խմբագիր Միհայել Հայրապետյանը, տեղակալը՝ Հովիկ Չարխչյանը, բաժնի խմբագիրը՝ Արմեն Վ. Հովհաննիսյանը: 8 էջանոց «Օրերը» բովանդակությամբ խիստ նման է «Շրջանին», մի թերթ էլ ավելացավ, որը կարելի է 8-րդ էջից կարդալ: «Ազգը» բարի երթ է մաղթում:

Մ. Մազմանյանի ցուցահանդեսը Բեյրութի Կոլբեր սրահում

Բեյրութում լույս տեսնող «Զարթօնքից» տեղեկանում ենք, որ Լա Սիգալ պանդոկի Կոլբեր սրահում մայիսի սկզբին բացվել է ճանդակագործ Մ. Մազմանյանի ցուցահանդեսը՝ Լիբանանի մշակույթի եւ բարձրագույն կրթության նախարար Միշել Էստեի հովանավորությամբ:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

Մեծ եղեռնի 80-ամյակին նվիրված գրքերի ցուցահանդես Հալեպում

Ապրիլի 30-ին Հալեպում, տեղի հայկական մշակութային միությունների կազմակերպությամբ բացվեց հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված արաբերեն-հայերեն գրքերի ցուցահանդես, որի հանդիսավոր բացմանը ներկա էին ոչ միայն սիրիահայ, այլեւ արաբ մտավորականության ներկայացուցիչներ, համալսարանականներ, հոգեւորականներ եւ մամուլի աշխատակիցներ եւ այլն: («Ազգն» հաստատ մի լուր տվել է դրա մասին):

Առաջին անգամ էր Սիրիայում նման ցուցահանդես կազմակերպվել, եւ որում ներկայացված արաբերեն, հայերեն եւ եվրոպական լեզուներով հրատարակված մոտ 400 անուն գրքերն ու վաստաթղթեր նվիրված էին հայոց ցեղասպանության, հայ ժողովրդի ընդհանուր պատմության ու մշակույթի, ինչպես նաեւ հայ-արաբական հարաբերությունների պատմությանը:

Ցուցահանդեսի բացումը Սիրիայի արաբ մտավորականությանը, հատկապես երիտասարդ սերնդին հնարավորություն տվեց մոտիկից ծանոթանալու մեր ժողովրդի պատմության առավել կարեւոր ժամանակաշրջանի XIX դարի վերջի եւ XX դարի սկզբի իրադարձություններին եւ դրանց գիտական ու անաչառ լուսաբանմանը:

Ցուցահանդեսի բացման ու կազմակերպման աշխատանքներին մեծ եռանդ են ցուցաբերել հալեպահայ մտավորական, բժիշկ եւ հասարակական գործիչ դոկտոր Գեորգ Թեմիզյանը, արաբ հայազգի Նայմ ադ-Դին Սամմանը եւ ուրիշներ:

Ցուցահանդեսի բացումն անշուշտ իր դրական դերը խաղաց հայ ժողովրդի պատմությանը ծանոթացնելու եւ հայ-արաբական հարաբերությունների մերձեցման ու ամրապնդման գործում:

ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Մարզական

ՄՕԿ

75-ամյա Սամարանչի խնդրանքը հարգվեց

ԳԵՎՈՐ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ,
«Լալանս, Ֆրանսիա»

Մոնակոյի «Օլոտինգ» համալիրի առանձին տեղի ունեցավ միջազգային օլիմպիական կոմիտեի տարեկան մեծ ժողովը: Ուշադրության կենտրոնում էին 1996-ին Ատլանտայում կայանալիք օլիմպիական խաղերի նախապատրաստական աշխատանքները եւ ՄՕԿ-ի նախագահի տարիքային սահմանափակման հարցը: Առաջին մեծ խոնդիր եղավ ամերիկացիների կողմից Ատլանտայի օլիմպիական խաղերի կազմակերպչական գործերի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը եւ 1990-ին այդ առթիվ Տոկիոյում ստորագրված պայմանագրերն արհամարելը: Ամերիկացիներն ուզում են մրցավարներին տեղավորել Ատլանտայի հյուրանոցներում: Դա զայրացրել է ՄՕԿ-ի ղեկավարներին, քանի որ ըստ պայմանագրերի նախատեսված է մրցավարներին տեղավորել հարուստ հյուրանոցներում: Մոնակոյում խոսվեց Ատլանտայի օլիմպիական խաղերի կազմակերպիչ, ամերիկացի Բիլլի Բեյնի շահերի մասին, որն այսօր հասնում է տարեկան 642 հազար դոլարի: Դա, օլիմպիական դեկավարներից շատերի կարծիքով, քիչ չէ: Մինչդեռ ամերիկացիները գտնում են, որ դա մեծ գումար չէ: ՄՕԿ-ի ղեկավարներ զայրացել էին նաեւ այն բանի համար, որ կազմակերպիչները չեն համագործակցում միջազգային օլիմպիական կոմիտեի կողմից առաջարկված քիրմաների հետ, որոնց հետ պայմանագրեր էր կնքել ՄՕԿ-ը, այլ անձնական նախաձեռնությամբ նախընտրում են գործ ունենալ ուրիշ ընկերությունների հետ: Մոնակոյում խոսք գնաց նաեւ դրամների մասին: ՄՕԿ-ի անդամ երկրների ազգային օլիմպիական կոմիտեներ պահանջում են հեռուստատեսային նկարահանումների իրավունքների վաճառքից գոյացած գումարների ոչ թե 7 տոկոսը, այլ մի քիչ ավելի: Ինչպես «Ազգն» արդեն գրել է, ՄՕԿ-ը նման իրավունքներ վաճառելով, մի քանի հարյուր միլիոն դոլար է գանձում, բայց ԱՕԿ-ներին բաժանում է ընդամենը դրա 7 տոկոսը: Բարսելոնայում ազգային կոմիտեներն ստացան 1.2 մլն դոլար: Ատլանտայում նրանք պահանջում են 2 մլն դոլար:

Մոնակոյում քննարկման 2-րդ կարեւոր ծառը եղավ Խուան Անտոնիո Սամարանչի տարիքը, որը հուլիսի 17-ին դեմ է բոլորի 75 ամյակը: Միջազգային օլիմպիական կոմիտեի օրենքների հոդվածներից մեկի համաձայն, արգելվում է, որ այս կազմակերպության նախագահը 75 տարեկանից ավելի լինի: Խուան Անտոնիո Սամարանչը, որը փորձ ինչ վատառողջ է, արտնություն խնդրեց, որ իր նախագահական գործունեությունը շարունակի մինչեւ 1997 թ.: Ժողովի մասնակիցները հարգեցին նրա խնդրանքը: Ըստ մի շարք լրագրողների, ՄՕԿ-ի իտալացի նախագահն իր անձնական շահերի համար ինչ ուզում է, անդայման ստանում է: Բացառված չէ, որ նա ներկա լինի նաեւ 2000-ին Սիդնեյի (Ավստրալիա) օլիմպիական խաղերին:

Սամարանչը եւ օլիմպիական չեմպիոններ Հրանտ Շահինյանն ու Այբերտ Ազարյանը

ԽՈՒՆԿԱՐ

Կատրին Կրաբեին դատարանը ներում ստորեց

Կանանց արագավազքի թագուհի Կատրին Կրաբեն (Գերմանիա) արգելված դեղամիջոցներ օգտագործելու համար բերեն ատլետիկայի միջազգային ֆեդերացիայի կողմից որակազրկվել էր 2 տարով: Այդ ժամկետը լրանում է 3 ամիս հետո: Կրաբեն որոշեց բողոք, բերեն ատլետիկայի միջազգային ֆեդերացիայի որոշման դեմ, դիմել էր Մյունխենի դատարանին, որն էլ ննելով հարցը արդարացրել է իրեն: Կվերադառնա՞ արդյոք աշխարհահռչակ արագավազորդուհին մրցասպարեզ, դժվար է ասել: Ինքը՝ Կատրին Կրաբեն ուզում է ուժերը փորձել որոշես մանեկենուհի:

Մարզիչը ծեծում էր սանտիներին

Չինաստանի կանանց բերեն ատլետիկայի մարզիչ Մա Ժուրենը խոստովանեց «Լոս Անջելես թայմս» թերթին, որ հաճախ է ծեծել իր սանտիներին, որ ավելի լավ վազեն:

Դրեզդենի «Դինամոյի» ֆինանսական ճգնաժամը

Նախկին Արեւելյան Գերմանիայի ուրախի չեմպիոն Դրեզդենի «Դինամոն» Բեռլինի «պատի» փլվելուց հետո այդ երկրի միակ թիմն էր, որ հանդես էր գալիս Արեւմտյան Գերմանիայի բունդեսլիգայում: Սակայն ֆինանսական մեծ ճգնաժամի պատճառով հաջորդ մրցաշրջանում այդ անվանի թիմը ելույթ է ունենալու երրորդ դիվիզիոնում, որը ոչ պրոֆեսիոնալ է համարվում: «Դինամոն» նույնիսկ հնարավորություն չունի խաղալ երկրորդ դիվիզիոնում, որը նույնպես պրոֆեսիոնալ է: Այնպես որ մեծ ֆուտբոլում ամեն ինչ որոշում են ֆինանսները:

ԹԵՆԻՍ

Սամփրասի նահանջը շարունակվում է

Աշխարհի նախկին լավագույն թենիսիստ Փիթ Սամփրասի նահանջը շարունակվում է: Թենիսի սիրահարները մի քանի տարի շարունակ սովորել էին վկա լինել միայն Սամփրասի հաղթանակներին: Ինչպես հայտնի է, համաշխարհային դասակարգման ցուցակում վերջերս նրան շրջանցեց Անդրե Ագասին: Երեւում է, հոգեբանական այդ ծանր բեռը բացասաբար է ազդում նրա ելույթների վրա: Հոմում սկսված միջազգային մրցաշարի առաջին իսկ փուլում Սամփրասը զիջեց (4-6, 3-6) ֆրանսիացի Ֆաբրիս Սանտորոյին եւ դուրս մնաց մրցաշարից: Նույն ճակատագիրն արժանացավ նաեւ ամերիկացի մեկ այլ աշխարհահռչակ թենիսիստ Ջիմ Կուրիեն, որը նույնպես Լոնդոնում փլուզվեց Ֆրանսիայի ներկայացուցչից Տերի Կուտարդոյից:

Իտալիայի բաց առաջնությունում անհաջողության մատնվեց նաեւ կիեւցի Անդրեյ Մեդվեդեւը, որը 3-րդ փուլում զիջելով խորվաթ Գորան Իվանիշեւիչին, դուրս մնաց հետագա դայտարից: Հաջորդ փուլ անցան Սերխիո Բրուգերան (Իսպանիա) եւ Ստեֆան Էդբերգը (Շվեդիա):

NBA

Մայքլ Ջորդանը կրկին տարերքի մեջ է

Բոլոր ժամանակների աշխարհի լավագույն բասկետբոլիստ Մայքլ Ջորդանը, տեւական ընդմիջումից հետո վերադառնալով խաղահրապարակ, կրկին հրաշքներ է գործում: ԱՄՆ-ի պրոֆեսիոնալ բասկետբոլի առաջնության (NBA) արեւմտյան եւ արեւելյան կոնֆերենցիաներում տեղի են ունենում կիսաեզրափակիչ հանդիպումներ: Առանց բացառության բոլոր գայլերում էլ անհաջ մրցակցություն է ընթանում եւ հաղթողներին որոշելու համար, հավանաբար, հարկ լինի անցկացնել կիսաեզրափակիչ սերիաների համար նախատեսված 7 ական հանդիպումներ: Այսպես, արեւելյան կոնֆերենցիայում NBA-ի նախկին չեմպիոն «Չիկագո Բուլզ» թիմը, որի կազմում հանդես է գալիս լեգենդար Մայքլ Ջորդանը, 5-րդ մրցաշրջանում արտագնա խաղում, 95-103 հաշվով զիջեց «Օռլանդոյին»: Մայքլ Ջորդանն այդ խաղում էլ անհասանելի էր: Նա վաստակեց 39 միավոր, սակայն դա էլ չօգնեց իր թիմին: «Օռլանդոն» առջեւում է 3-2 հաշվով:

Արեւմտյան կոնֆերենցիայում «Սան Անտոնիոյի» եւ «Լոս Անջելես-Լեյքերսի» միջեւ նույնպես դայտարը կրկին արվեց: «Լեյքերսը» մրցակցի հարկի տակ հաղթեց 98-96 հաշվով եւ կրճատեց ընդհանուր հաշվի տարբերությունը: Այսպես 3-2 հաշվով առաջում է «Սան Անտոնիոն», սակայն 6-րդ հանդիպումը տեղի է ունենալու Լոս Անջելեսում: Արեւմտյան կոնֆերենցիայի կիսաեզրափակիչ մյուս զույգը կազմում են NBA-ի ներկայիս

չեմպիոն «Հյուստոնը» եւ «Ֆենիքսը»: Նրանց միջեւ 5-րդ հանդիպումն ավարտվեց ԱՄՆ-ի անցյալ տարվա լավագույն բասկետբոլիստ Չարլզ Բարկլիի թիմի «Ֆենիքսի» դայտարությամբ 97-103 հաշվով: «Ֆենիքսը» հանդես էր գալիս հյուրընկալողի դերում: Այնուամենայնիվ, 3-2 ընդհանուր հաշվով առջեւում է «Ֆենիքսը»:

ՏՐՅՈՒԳԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաղթեցին բրազիլացիները

Նոյեմբերի աշխարհի չեմպիոն Բրազիլիայի հավաքականը ընկերական խաղ անցկացրեց Թել Ավիվում, սակայն ուժերը չափեց Իսրայելի հավաքականի հետ: Բրազիլացիները չնայած մեկ գոլակ խիստ ցին, սակայն հաղթեցին 2-1 հաշվով: Մեկ գոլակ սեփական դարպասն անցկացրին դաշտի տերերը: Աշխարհի չեմպիոնը Եվրոպա էր ժամանել ոչ լրիվ մարտական կազմով:

ԲԱՍԿԵՏԲՈԼ

Սաբոնիսը՝ գարեջրի սիրահար

Ինչպես հայտնի է, Մադրիդի «Ռեալը» Սաբոնիսի գլխավորությամբ Սարագոսայում տեղի ունեցած եզրափակիչում 73-61 հաշվով հաղթելով Յունասանի «Օլիմպիակոս» թիմին, դարձավ Եվրոպայի ակումբային թիմերի չեմպիոն: Սկսած 1964-ից մինչեւ 1980 թ. «Ռեալը» 7 անգամ հաղթել էր Եվրոպական երկրների չեմպիոնների գավաթի խաղարկություններում: Տիտղոսակիր թիմը 3 անգամ տիրել է նաեւ գավաթակիրների գավաթին եւ 1 անգամ հաղթել Կորաչի գավաթի խաղարկությունում: Սակայն 10 տարուց ավելի էր, ինչ «Ռեալը» ոչ մի եվրոպական մրցաշարերում, առանց որեւէ գավաթ նվաճելու: Մադրիդի թիմը իր հերթական հաջողության համար ավելի շատ պարտական է 2 անձնավորություններ: Առաջինը թիմի հարավսլավացի մարզիչ Ժելիմիր Օբրադովիչն է, որը կարողացավ հարուստ ավանդույթներ ունեցող հարավսլավական բասկետբոլային դպրոցի տեխնիկական բարձր որակները փոխանցել իսպանացիներին: Օբրադովիչն այն բացառիկ մարզիչն է, որի գլխավորությամբ տարբեր թիմեր վերջին 4 տարիների ընթացքում 3 անգամ նվաճել են Եվրոպայի ակումբային ուժեղագույն թիմի տիտղոսը՝ Բելգրադի «Պարտիզանը» (1992), Իտալիայի «Բադալոնան» (1994) եւ վերջապես Մադրիդի «Ռեալը» (1995):

Երկրորդը, որին իր հաջողության համար պարտական է «Ռեալը», Արվիդաս Սաբոնիսն է, որը չնայած տուգանքների պատճառով 25 րոպե շուտ թողեց խաղահրապարակը, սակայն հանդիպման ամենաարդյունավետ խաղացողն էր (23 միավոր): Սաբոնիսի նետումների 72 տոկոսը հասավ նպատակին: «Օլիմպիակոսը»՝ Եվրոպայի ամենահարուստ թիմը, ամերիկացի իր մեծ խաղացողներով (Մայքլ Յոնգ, Էդդի Ջոնսոն) չկարողացավ դիմակայել մադրիդցիներին եւ երկրորդ տարին անընդմեջ եզրափակիչներում զիջեց իսպանական թիմերին: «Ռեալը» վերջ տվեց իր 15 տարվա անհաջողություններին:

Խոսվում է այն մասին, որ Մադրիդի «Ռեալ» թիմի լավագույն դիսպետչեր Արվիդաս Սաբոնիսը հավանաբար Եվրոպայում ամենավաստակավոր բասկետբոլիստն է: Լիտվացին իր 2 մ 20 սմ հասակով մի լեռ է, որ երբ ջղայնանում է, մարգարեանում երկրաչարժ է առաջացնում եւ ստեղծում աղետալի մի տարածք: Բայց երբ Սաբոնիսի տրամադրությունը բարձր է լինում, նա դառնում է աշխարհամասի ամենաուժեղ խաղացողը: Այս ծանր քաշի բասկետբոլիստը, երբ վազում է, նրա ծանր ոտքերը շարժում են գետինը: Սաբոնիսը իր նմանը չունի խաղի նուրբ գաղտնիքները իմանալու տեսակետից: Նա շատ խելացի բասկետբոլիստ է: Բայց շատերը ասում են, որ Սաբոնիսը խորհրդային տարիներից պահպանել է մի շատ վատ սովորություն, այն է՝ մեծ սերը գարեջրի նկատմամբ: 1980 թվականներին Սաբոնիսը Խորհրդային Միության հավաքականում վարում էր լիտվական լեգիոնը եւ մեդալներ, գավաթներ ու զանազան պարգեւներ էր նվաճում մի երկրի համար (ԽՍՀՄ), որին ատում էր: Բայց Արվիդաս Սաբոնիսը ոտքի վնասվածքի պատճառով չկարողացավ մնալ գագաթնակետին: Բելգրադի պատը փլվելուց շատ առաջ NBA-ն այլ ուներ այս բացառիկ խաղացողի վրա: Սաբոնիսն ընդգրկվեց Պորտլանդի «Բլեյզերս» թիմում: Սակայն տաղանդավոր բասկետբոլիստը վնասվածք ուներ եւ վեց ամիս շարունակ թիմի հաշվին ապահովվում էր: Անհավասալի ծեւով Սաբոնիսն այսպես պատրաստվեց 1988-ի Սեուլի օլիմպիական խաղերին, որտեղ Խորհրդային Միության հավակնությունը Ալեքսանդր Գոմելսկու գլխավորությամբ նվաճեց չեմպիոնի կոչումը: Սեուլից հետո «ծույլ» Սաբոնիսը ցանկացավ հանգիստ կյանքով ապրել եւ պայմանագիր ստորագրեց Իսպանիայի 2-րդ դիվիզիոնի առաջնության մասնակից մի թիմի հետ: Բայց հետո Սաբոնիսը երեք միլիոն դոլար արժողությամբ երեք տարվա պայմանագիր կնքեց Մադրիդի «Ռեալի» հետ: Ըստ մասնագետների, Սաբոնիսը, որը բասկետբոլի հսկա ամենալավ խաղացողն է, կարող է դառնալ նաեւ գոգակետ փոխանցող աշխարհի ամենալավ խաղացողը, եթե իմանա իրեն նեղություն տա եւ ավելի բարձր լինի պայքարի դրա համար:

Բանիկը՝
ՍԱՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքերով

ԿԱՐԳԱԿՈՐՈՒՄ

Եվրոպան ԵԱՀԿ-ի օգտին՝ դարաբաղյան հարցում

Մայիսի 15-ին Լիսաբոնում կայացավ արևմտաեվրոպական միության ներկայացուցիչների հանդիպումը արտգործնախարարների եւ պաշտպանության նախարարների մակարդակով: Ընդունված կոմյունիկեում նախարարները մասնավորապես ընդգծել են, թե նրանք մեծ կարեւորություն են տալիս ԵԱՀԿ-ին եվրոպական անվտանգության եւ հակամարտությունները կանխարգելելու, ճգնաժամերը կառավարելու, ինչպես նաեւ մարդու իրավունքների բնագավառում իրավիճակը բարելավելու գործում նրա դերի բարձրացմանը: Նախարարները բավարարվեցին Բուդապեշտում բարձր մակարդակի հանդիպման արդյունքներով, մասնավորապես, ԵԱՀԿ-ն ամրացնելու հարցում: Նախարարները ընդգծեցին իրենց աջակցությունը դարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ-ի գործողությունները խորացնելու հարցում, ինչի մասին որոշումն ընդունվել էր Բուդապեշտում: ԵՏ

Հայոց ցեղասպանությունը այնուամենայնիվ կուսուցանվի Իսրայելի դպրոցներում

Մեր ընթերցողներն արդեն իսկ ծանոթ են այն քննարկումներին, որոնք Իսրայելում տեղի են ունեցել դպրոցական ծրագրերում հայկական ցեղասպանությանը վերաբերող նյութեր ընդգրկելու հարցում: Ֆրանսիական «Լիբերասիոն» թերթն անդրադառնալով այդ եւ հրեական ցեղասպանության հարցին ընդհանրապես, նշել է, որ Իսրայելի բարձրագույն կրթության հաստատություններից մեկում վերջերս տեղի ունեցած տոնական արարողությունների ընթացքում վառվել են ոչ թե վեց (6 հազար հրեաների կորուստը ընդգծող), այլ 7 ջահեր: Վերջինս նշելու համար ինչպես հայ, այնպես էլ ամերիկացի եւ ռուսաստանցի զոհերի հիշատակը: Իսրայելի Գերագույն Ռաբբին դատարարել է կրթական հաստատության այս քայլը, այն համարելով հրեական ողջակիզումը նվաստացնող մի երեւույթ: Այդ առիթով սուր վիճաբանություններ են առաջացել երկրում հրեական ողջակիզումը եզակի երեւույթ համարողների եւ այն ավելի ընդհանուր միջազգային կոնտեքստի մեջ տեսնողների միջեւ: «Լիբերասիոնի» հոդվածը, հիմնվելով փոխադասության հարաբերությունների նախարար Սաբանիի տվյալների վրա, որը միակն է եղել մասնակցելու վերոհիշյալ տոնակատարություններին, նույնպես նշել է, որ Իսրայելի կառավարությունը որոշել է հայկական ցեղասպանությունն ընդգրկել դպրոցական ծրագրերում: «Լիբերասիոնի» այն փաստարկներին, թե հայկական հարցերն ու փաստաթղթերը կառավարական գրաքննության են ենթարկվում ի շահ Թուրքիայի հետ երկրի հարաբերություններին, Սաբանին պնդել է համոզված, որ այնուամենայնիվ «Հայկական ցեղասպանությունը կուսուցանվի Իսրայելի դպրոցներում»:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Թուրքիա-Հունաստան հարաբերությունները ՆԱՏՕ-ի ուշադրության կենտրոնում

Կիպրոսում դաշնություն՝ Շվեյցարիայի օրինակով

Ըստ TRT-ի հաղորդման, աշխատանային Անկարայում Լին գտնվում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Վիլլի Քլասը եւ դաշնակցային զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Ջորջանը: Նրանք հանդիպումներ ունեցան նախագահ Դեմիրելի, վարչապետ Չիլլերի եւ պաշտպանության նախարար Մեհմեդ Գյոլհանի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին Թուրքիայի եւ Հունաստանի միջեւ առկա հակասությունները ու տարածաշրջանները լուծելու հետ առնչվող խնդիրները: Հանդիպումներն ավարտվելուց հետո տեղի ունեցավ ընդլայնված մամուլ ասուլիս: Պատասխանելով լրագրողների հարցերին, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարն ասաց. «Մենք դաստաֆի ծրարներ չենք բերել, բայց ՆԱՏՕ-ի հարավարեւելյան թեւում առաջացած հակասությունները վերացնելու ուղղությամբ տեղի ունեցան մի շարք օգտակար քննարկումներ: Թուրքիան եւ Հունաստանը ռազմավարական շատ կարեւոր դերեր են գրավում, եւ այդ առումով այս երկու երկրների միջեւ տարաձայնությունները հաղթահարելու ուղղությամբ զգալի ջանքեր են գործադրվում: Առաջիկա շաբաթներին Անկարայի եւ Աթենքի միջեւ խոսվելն լուրջ դիվանագիտական շփումներ: Այնպես որ, երկու երկրների միջեւ առկա հիմնահարցերի լուծումն օգտակար է ոչ միայն ՆԱՏՕ-ի, այլ նաեւ տարածաշրջանի երկրների համար»:

TRT-ն հաղորդել է նաեւ, որ Կիպրոսի հարցով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջոն Քլարկն Անկարայում եւ Աթենքում իր հանդիպումներն ավարտելուց հետո ժամանեց Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության (ՀԿԹՀ) մայրաքաղաք Լեֆքոշա: Քլարկին ընդունեց ՀԿԹՀ-ի նախագահ Ռաուֆ Դենքթաշը: Հանդիպման ընթացքում կողմերը նորից արտահայտվեցին «Կիպրոսում Շվեյցարիայի օրինակով դաշնություն ստեղծելու գաղափարի օգտին»: Հանդիպման ավարտից հետո Քլարկը լրագրողներին ասաց, որ «ձգտում են առաջիկայում Դենքթաշ-Քլերիդես անհնազանդելի հանդիպումը, եւ այդ առումով ստացել են վերջիններիս համաձայնությունը»: Գ. Ղ.

Թուրքիան դատապարտ է օգնել Վրաստանին ռազմական բնագավառում

ԹԲԻԼԻՍԻ, 19 ՄԱՅԻՍ, ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԲՇԻ: Վրաստանի եւ Թուրքիայի միջեւ ռազմաքաղաքական հարաբերությունների հարցը քննարկվել է Վրաստանի պաշտպանության նախարար Վարդիկո Նադիբաիձեի այդ հանդեպ տածությունում Թուրքիայի դեսպան Ռիֆատ Օքիսուզի եւ ռազմական կցորդ գնդապետ Զեյքել Բաբաչի հետ ունեցած զրույցում: Ինչպես հաղորդում է վրացական ԲՇԻ գործակալությունը վկայակոչելով Վրաստանի պաշտպանության նախարարությունը, զրույցի ժամանակ դարձվել է, որ Թուրքիան մեծապես կարեւորում է այդ հարաբերությունները եւ պատրաստ է Վրաստանին օգնություն ցուցաբերել ռազմական ուժերի կառուցման ասպարեզում եւ կիսել նրա հետ իր ռազմավարական փորձը:

ՇՐՋԱՆ

Ի վերջո ծո՞վ է, թե՞ լիճ Կասպիցը

Ղազախստանի մայրաքաղաք Ալմա-Ատայում հավաքված Կասպից ծովի երկրների ներկայացուցիչներն այդպես էլ չկարողացան մի որոշակի եզրակացության հանգել այն հարցի շուրջ, թե Կենտրոնական Ասիան Կովկասից բաժանող աշխարհի ամենամեծ (169.900 քառ. մղոն քառ.) միջերկրային ջրային տարածությունը՝ ի վերջո ծո՞վ է, թե՞ լիճ, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Մասնակիցները, որոնց թվում էին Ղազախստանը, Ռուսաստանը, Ադրբեջանն ու Իրանը (Թուրքմենստանը չէր ներկայացել) որոշեցին աշխատանային մի խումբ ստեղծել հունիսին դարձյալ այդ հարցը քննելու նպատակով: Նրանք նաեւ պետք է քննարկեն ջրային տարածքի հարստությունների (նավթ, ձկնկիթ, այլն) համաչափ բաշխման հարցը:

Ադրբեջանն ու Ղազախստանը պնդում են, որ Վոլգայով սնուցվող, բայց ոչ մի օվկիանոսի մեջ չթափվող Կասպիական ծովը պետք է միջազգային ծովագնացության օրենքով համարել ներփակյալ ծով: Այդ դեպքում առափնյա երկրներին իրավունք կտրվի միջազգային նորմերի համաձայն զարգացնել յուրաքանչյուրին բաժին ընկնող տարածքն ու օգտվել այդ տարածքի հարստություններից: «Կասպիականը պետք է բաժանվի, եւ ոչ թե օգտագործվի բոլորի կողմից», ասում է Ղազախստանի փոխարտգործնախարար Վյաչեսլավ Գիզատովը, որը երկու օր նախագահել է բանակցությունները:

Մինչդեռ Ռուսաստանի դաշվիրակությունը կողմ է, որ այն մնա լճի կարգավիճակով եւ նրա հարստությունները բաժանվեն ընդհանուր սեփականության այսպես կոչվող կոնդոմի նիշի սկզբունքով: Իրանն առայժմ պաշտպանելով ռուսական կողմնորոշումը նախընտրում է կառչած մնալ Խորհրդային Միության հետ 1921 եւ 1940 թվերին կնքած պայմանագրերին: «Մինչ նոր որոշման հանգելը, նախկինը դեռ ուժի մեջ է մնում: Մենք ոչ պետք է շտապենք, ոչ էլ հապաղենք, այլ հանգիստ քննարկենք», ասել է փոխարտգործնախարար Աբբաս Մալեքին:

Դիտորդների կարծիքով, վիճելի այս հարցը կարող է խանգարել մտադրություններն Ադրբեջանի եւ Ղազախստանի, որոնք արդեն իսկ միջազգային-քաղաքական հետ պայմանագրեր են ստորագրել նավթային իրենց պաշարները զարգացնելու համար:

ՀԱՄԱՌՈՏ

Այաթոլլահ Խամենեի. «Մեր ժողովուրդը ծնկի չի եկել»

ԹԵՀՐԱՆ, 19 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Իսլամի բշամիները միտս ամեն մի հարց որպես պատրվակ են օգտագործում մահմեդականներին պառակտելու համար, սակայն մենք ամբողջ ուժով կդիմակայենք մեր բշամիներին», Ալիին Մուհամեդի փոխանորդ հայտարարելու տոնի տարեդարձի օրը բարձրաստիճան խաղաղասիրական եւ զինվորական անձանց հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Իսլամական հեղափոխության մեծ առաջնորդ այաթոլլահ Օզմա Խամենեին: «Աշխարհի ընչազուրկ եւ անպաշտպան մարդկանց հանդեպ Իրանի ժողովրդի ուժգին սերը եւ հարգանքի զգացումը բխում են մահմեդական կրոնից: Մեր ժողովուրդը դիմակայել է իմպերիալիզմին եւ մասնավորապես Ամերիկային, ինչպես նաեւ ամեն տեսակ սպառնալիքների, երբ արեւմտյան եւ արեւելյան դաշինքները ծեծ ծեծի տված դիմակայում էին Իրանի Իսլամական Հանրապետությանը: Մեր ժողովուրդը ծնկի չի եկել, բայց բշամուն ծնկի է բերել», ավելացրեց նա:

Եվրամիությունը քննարկում է տրանսպորտային խնդիրներ

ԱԼՍՍ ԱՅԼ, 19 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Եվրամիության շրջանակներում երեկ այստեղ բացվեց տրանսպորտային ծրագրին նվիրված միջազգային խորհրդակցություն: Բաքվի ուղիղի հաղորդման համաձայն, քննարկվել են Եվրոպա-Կովկաս-Ասիա ճանապարհի արդիականացման նախագծի հետ կապված հարցեր: Առաջնահերթ խնդիրների թվում նշվում է Բաքվի եւ Բաթումի նավահանգիստների վերականգնման անհրաժեշտությունը, որոնք գտնվում են անմխիթար վիճակում:

Աղետ Նյու Մեխիկո նահանգում

ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի երկու փորձառու օդաչու է զոհվել հինգշաբթի օրը Նյու Մեխիկոյի նահանգի օդային տարածությունում վարժական թռիչք կատարելու ընթացքում: Պենտագոնի ներկայացուցիչների հաղորդման համաձայն, F-18 D երկտեղանոց վարժական գրոհիչ ինքնաթիռում են եղել դեր ծովակալ Ջեյմս Փրաուտը եւ 25-րդ հարվածային կործանիչ սավառնայնթի հրամանատար Ջոզեֆ Բլիֆիրը: 51-ամյա Փրաուտը «Կալ Վինսոն» ավիակրի հարվածային միավորման հրամանատարն էր: Նրանք Սան Դիեգոյից թռչում էին Սենս Լուիս: ԱՐՄԵՆՊՐԵՍ

Շեւարդնաձեի աշխատավարձը 10 դոլար է

Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն հետխորհրդային երկրների ամենացածր վարձատրվող ղեկավարն է: Մայիսի 16-ին հաղորդել է «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը: Նրա ամսական աշխատավարձը կազմում է մոտավորապես տասը դոլար: ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԱՆԻ.5
ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՖԻՐՄԱՆ
ՀՐԱՎԻՐՈՒՄ Է
ԵՐԵՎԱՆ → ՄԻՆՍԿ ԲՐԵՍ → ՎԱՐՇԱՎԱ
ԱՄԵՆԱԼԺԱՆ ԳԵՐԸ ՕԴԱՅՈՏ ԵՆ
«Էրեբունի» հյուր., 1-ին մասնաշենք, 4-ր հարկ, 456 սենյակ, հեռ.՝ 560506

ԱՐՄԻՆԴ
ԿԵՆՏՐՈՆԸ
ՀՐԱՎԻՐՈՒՄ Է
հինգօրյա ճանապարհորդության դեպի Հնդկաստանի մայրաքաղաք:
ԵՐԵՎԱՆ - ԴԵԼԻ - ԵՐԵՎԱՆ
Հերթական ուղիղ չվերթը կկայանա հունիսի 24-ին
(ուղևորության ընթացքում ինքնաթիռը մնում է Դելիում)
«Էրեբունի» հյուրանոց, I մասնաշենք, 301-307 ս.
Հեռ. 52-75-65, 56-13-92, 56-05-79
ARINA

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երեւան 23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1843 Տպաքանակը՝ 7000 Ստորագրված է տպագրության՝ 19. 05. 1995 Գինը՝ 40 դրամ

digitised by A.R.A.R.@